ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ՀԱՅ–ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Առաջին աշխարհամարտը և երիտթուրքական կառավարության կողմից կազմակերպած արևմտահայության ցեղասպանությունը, որի իրականացմանը մեղսակից դարձան նաև քրդական խոշոր զանգվածները, հայերին և քրդերին բաժանեցին թշնամի բանակների: Իր քաղաքական ու սոցիալ–տնտեսական հետամնացության, կրոնական և տոհմացեղային նախապաշարմունքների, ապագայի առումով իր ազգային նպատակների պարզ գիտակցությունը չունենալու պատճառով, քուրդ ժողովուրդը գործիք հանդիսացավ ռազմաշունչ մոլուցքով տարված թուրքական տիրապետող շրջանների քաղաքական արկածախնդրությանը: Հայերի ցեղասպանության պատասխանատվությունը Իթթիհադից հեռացնելու համար հետագայում երիտթուրքական գործիչները վտրձել են քրդերի վրա բարդել այդ հանցագործության պատասխանատվության մեծ մասը, որպես գլխավոր շարժառիթ ներկայացնելով մտացածին մի վարկած հայերի և քրդերի ռասայական հակամարտության մասին:

Քրդերին համաշխարհային պատերազմի մեջ ներգրավելու նպատակով, Իթթիհադը շռայլ խոստումներ էր տալիս նրանց, պատերազմի հաղթական ավարտից հետո այդ ժողովրդի ազգային ձգտումները բավարարելու վերաբերյալ: Մասնավորապես, երիտթուրքական կառավարությունը խոստացել էր «Քուրդիստանում», որի տակ հասկացվում էր Արևմտյան Հայաստանը, քրդերին հատկացնել ինքնավարություն: Սակայն պատերազմի վեր-

ջին էտապում Արևմտյան Հայաստանի տարածքի զգալի մասը ռուսական զորքերի կողմից գրավման ենթարկվելուց հետո քրդերի մոտ կատարելապես ամրակայվեց այն համոզումը, որ այդ գրավումը վերջնական է և, որ Ռուսաստանը այլևս չի հեռանալու այդ տարածքներից: Դա քրդերին ներշնչեց այն համոզումը, որ այդ նոր տիրապետության տակ իրենք դառնալու են երկրորդական մի ուժ, իսկ կացության տերը պիտի հանդիսանան հայերը:[1] Այդ մտավախությունը ավելի շեշտված ձևով ուրվագծվեց հատկապես Ռուսաստանում, 1917թ. փետրվարյան հեղափոխությամբ հռչակված ազգերի ինքնորոշման հիման վրա հաշտության հասնելու ժամանակավոր կառավարության 1917թ. ապրիլի 9-ին (մարտի 27) հրապարակած հռչակագրով, որտեղ հայտարարվում էր, որ Ռուսաստանում ստեղծված նոր իշխանությունը իր հերթական խնդիրներից մեկն է համարում Ասիական Թուրքիայի ոչ թուրք բնակչության ազատագրումը:[2] Դա քրդերի կողմից ոչ անհիմն կերպով, ընկալվեց այն իմաստով, որ Ռուսաստանի կողմից հայկական հարցը կրկին իջեցվում է հրապարակ: Այդ ենթադրությունը համարյա դարձավ համոզմունք 1917թ. ապրիլի 26-ին (մայիսի 7) Ժամանակավոր կառավարության մինիստրների խորհրդի նախագահ, իշխան Ե.Լվովի և արտաքին գործերի մինիստր Պ. Միլյուկովի ստորագրած «Թուրքահայաստանի մասին» որոշման հրապարակումից հետո: Քրդերին հայտնի էր նաև, որ Եռյակ համաձայնության պետությունների կողմից ծրագրեր են մշակվում հայկական հարցի ուղղությամբ և որքան էլ որ դժվարին լինեին նրա իրականացման հնարավորությունները, այնուամենայնիվ չէր կաբելի բացառել Արևմտյան Հայաստանի տարածքում հայկական պետականության ստեղծման հավանականությունը: Քրդական քաղաքական մտքի ներկայացուցիչների կողմից դա համարվում էր միանգամայն ռեալ, քանի որ արդեն վաղուց մեծ տերությունների կողմից հայերը դիտվում էին որպես միջազգային հարաբերությունների սուբյեկտ: Դա ստիպում էր ենթադրել, որ հայերի և քրդերի միջև պայքարի հանգուցալուծումը միևնույն տարածքների վրա հայրենիք կերտելու ուղղությամբ հայերի օգտին ավարտվելու ավելի մեծ հնարավորություններ ուներ: Իսկ դա նշանակում էր, որ հոդս կցնդեին ինքնավարության կամ անկախության հասնելու քուրդ ազգայնականների փայփայած երազանքները: Այս ծանր մտորումները նրանց մոտ առաջ էին բերում

խորը տագնապի և անհանգստության զգացումներ, մանավանդ որ քրդերը այժմ մեն–մենակ էին մնում Արևմտյան Հայաստանում հայկական վրեժխնդրության և ռուսական զորքերի դիմաց, որոնց դեմ եռանդուն կերպով պայքարել էին ողջ պատերազմի ընթացքում:

Սակայն շուտով իրադարձությունների մեջ կատարվեց կտրուկ շրջադարձ. ռուսական կովկասյան ճակատը քայքայվեց և զորքերը լքելով իրենց դիրքերը, զանգվածորեն սկսեցին հեռանալ: Ռազմական, քաղաքական և տնտեսական կործանման եզրին հասած թուրքական պետությունը, միանգամայն անսպասելիորեն, ստացավ իր պանթուրանական փառասիրությունները կենսագործելու նոր հնարավորություն և չհապաղելով օգտվել դրանից, փորձեց իր օգտին շրջել դեպքերի զարգացումը: Խախտելով 1917թ. դեկտեմբերի 18–ին կնքված Էրզինջանի զինադադարը, թուրքական բանակը «մահմեդական բնակչության պաշտպանության» պատրվակի տակ ռազմարշավ կազմակերպեց դեպի Կովկաս: Թուրքական արշավող բանակի ճնշման ներքո հայերը աստիճանաբար հետ էին քաշվում Արևմտյան Հայաստանից: Թվում էր, թէ մոտենում է Թուրքիայի համար հիվանդագին հայկական հարցի լուծումը այն տարբերակով, որը մշակվել և մասամբ արդեն իրագործվել էր երիտթուրքական հայատյաց շովինիստների կողմից: Կովկասյան ճակատի քայքայումով վտանգի տակ էին ընկնում ոչ միայն պատերազմի ընթացքում ռուսական զորքերի գրաված Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները, այլև ողջ Արևելյան Հայաստանը: Հայությունը կրկին դեմ առ դեմ հայտնվում էր մահացու սպառնալիքի առաջ և մատնվում անորոշության:

Քրդերի մեծամասնությունը, որը Արևմտյան Հայաստանի ռուսական գրավման շրջանում ակնդետ սպասում էր թուրքական բանակի վերադարձին, կրկին թշնամական դիրք գրավելով հայության հանդեպ, կամովին միացավ դեպի Կովկաս արշավող թուրքական բանակին: Իթթիհադականների հետ միավորված քրդությունը մեկ անգամ ևս դառնալով թուրքական դավադրական խաբեության զոհը՝ դյուրահավատությամբ ենթադրում էր, որ լծվելով թուրքական քաղաքականության սայլին, լուծում է իր անկախության ու պետականության խնդիրները: Այդ պատրանքներն էլ ավելի բորբոքելու նպատակով, թուրքական քաղաքական շրջան-

ները և ճակատի զինվորական հրամանատարությունը ծավալեցին լայն հակահայկական քարոզարշավ, հայերի գլխին թափելով ստահոդ մեղադրանքներ, մահմեդական բնակչության և հատկապես քրդերի նկատմամբ «գազանություններ» թույլ տալու վերաբերյալ: Այլ կերպ ասած, հետևողականորեն հող էր նախապատրաստվում վերջնականապես պառակտելու հայ և քուրդ ժողովուրդներին և բացառելու Արևմտյան Հայաստանի տարածքում նրանց հնարավոր քաղաքական համագործակցությունը: Այդ անշնորհակալ գործին եռանդուն մասնակցություն էր բերում դեռևս 1916թ. իթթիհադական մութ ուժերի կողմից կազմակերպված «Իսլամի միություն» անունով ռազմաշունչ կազմակերպությունը, որը թուրքերին և քրդերին մղում էր արյունոտ բախումների հայերի հետ, իսկ ապա այդ միջադեպերի կազմակերպման ողջ պատասխանատվությունը բարդում հայերի վրա:[3] Դեպի Կովկաս արշավող թուրքական երրորդ բանակի հրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշայի նախաձեռնությամբ կազմակերպվել էին անկանոն քրդական ջոկատներ, որոնք նախատեսված էին թիկունքում ասպատակ սփռելու և հայ բնակչության նկատմամբ ահաբեկչական գործողություններ իրականացնելու համար:[4] Քրդական այդ ջոկատները մի շարք վայրերում (Էրզինջան, Բայբուրդ, Դերսիմ, Կարս, Արդահան) արյունոտ հաշվեհարդարներ իրականացրին հայ խաղաղ բնակչության նկատմամբ, հանդուգն հարձակումներ էին գործում հեռացող ռուսական զորքերի վրա և այլն:[5]Արդեն 1918թ. մարտի վերջին և ապրիլի սկզբին թուրքական զորքերը հասան 1914թ. ռուս–թուրքական սահմանին, իսկ մեկ ամիս անց՝ 1877թ. սահմանին: Այնուհետև խորանալով Անդրկովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի տարածքով, սկսեցին շարժվել դեպի իրենց նվիրական նպատակը՝ Բաքու: Հայկական զորքերը ստիպված էին գերմարդկային ճիգերով պաշտպանել մի ընդարձակ ճակատ: Իսկ թիկունքը վտանգված էր քրդական և թաթար–ազերիական սպառնալիքով: Այդ պարագաներում տրամաբանությունը հուշում էր մի ընդհանուր հասկացողություն գտնել քրդերի հետ, նրանց բացատրելով, որ թուրքական արշավանքին մասնակցությունն անհարիր է իրենց ազգային շահերին: Վկայելով այդ մասին, դեպքերին ժամանակակից ու մասնակից Կարո Սասունին գրում է. «Հակառակ հայության արդար վրեժխնդրության, դարձյալ կային հայ ազգային մարմիններ, որոնք կը ձգտեին

մնացորդ քրտության հետ համերաշխության լեզու մը գտնել և դիմագրավել թրքական վտանգը: Համերաշխության և համագործակցության կարգ մը փորձեր կատարվեցան, բայց անհաջող, որովհետև քյուրտերը վերապահ էին և չէին գիտակցեր տակավին, թե գրավված վայրերեն դուրս գտնված քյուրտերուն ինչ բախտ վիճակված է»:[6]

1918 թ. հունվարին քրդերի հետ համերաշխություն ու բարեկամություն հաստատելու մի փորձ է կատարվում նաև Խնուսում: Կ. Սասունիի նախաձեռնությամբ այստեղ են հրավիրվում Բինգյոլի, Շուշարի, Թեքմանի և Վարդոյի քուրդ երևելիները և ներկայացուցիչները «քուրդ–հայկական մի համագումարի»: Քրդերին պարզաբանվում է երկու ժողովուրդների անցյալի հարաբերությունների ողջ պատմությունը, խոսվում է հայերի և քրդերի նկատմամբ թուրքական ջարդերի մասին և շեշտվում հայ–քրդական բարեկամության ու գործակցության անհրաժեշտությունը: Այդ բոլորը որոշ քուրդ պատգամավորների մոտ առաջ է բերում դրական արձագանք, սակայն մեծամասնությունը, հակառակ արտաքուստ հավանություն տալուն, չի թաքցնում իր մեջ սնուցվող թշնամական ոգին հայերի նկատմամբ:[7] Ավելին, երբ թուրքական բանակը 1918թ. փետրվարի վերջերին ուժեղացրեց ճնշումը հայկական զորամասերի վրա, հակառակ ժողովում իրենց տված հավատարմության ու բարեկամության երդումներին, քրդերի մեծ մասը դարձյալ օժանդակեց թուրքերին: Քրդերի աջակցությունն իթթիհադականներին մեծապես օգնեց վերջիններիս Ատրպատականը և Իրանական Քրդստանը ևս գրավելու գործում: Երբ 1918թ. փետրվարին թուրքական բանակի չորրորդ բանակային կորպուսը սկսեց շարժվել դեպի իրանական սահմանը և ապրիլին Միջագետքում տեղակայված վեցերորդ բանակի զորամասերի հետ մուտք գործեց Ատրպատական և Իրանական Քրդստան, որտեղից ռուսական զորքերն արդեն հեռացել էին, թուրքերին անմիջապես միացան ոչ շատ վաղուց նրանց դեմ կռվող քրդական ցեղապետեր շեքքաք ցեղի Ավդո ճյուղի առաջնորդներ Իսմայիլ աղա Սըմկոն և սեյիդ Թահա (Թահա), որոնք սկսեցին ուժգին հարվածներ հասցնել հայերի և ասորիների մարտական ջոկատներին:[8] Նրանց օրինակին հետևեցին նաև Սոուջբուլաղի (Մեհաբադ) և այլ վայրերի քրդերը: Քրդերի այդ վարքագիծը Իրանում անգլիացիների համար ստեղծում էր տագնապալի վիճակ, նաև այն

պատճառով, որ Ատրպատականում և Իրանական Քրդստանում նրանք զորքեր չունեին և այդ երկրամասում իրենց ռազմական քաղաքականությունն իրականացնելիս հենվում էին հայկական ու ասորական զորամիավորումների վրա: Ուստի բրիտանական հատուկ ծառայությունները սկսեցին եռանդուն աշխատանք տանել Եվրոպայում և Մերձավոր Արևելքում քրդական ազգայնական վտարանդության ներկայացուցիչներ Բադրխան–բեկի, Սուրեյա Բադրխանի, Աբդուրրեզակ–բեյի, Յուսուֆ Քյամիլ–բեյի և այլոց հետ, աշխատելով համոզել նրանց, որ հանուն դաշնակիցների շահերի անհրաժեշտ է համագործակցել հայերի հետ, խոստանալով, որ պատերազմից հետո քրդերը կազատագրվեն թուրքական լծից:[9] Անշուշտ անգլիացիները համոզելու այդ գործելակերպը ամրակայում էին քուրդ երևելիներին խոշոր կաշառքներ հատկացնելու կամ նրանց անձնական պատվախնդրությանը հագուրդ տալու շռայլ խոստումներով: Արձագանքելով բրիտանական առաջարկներին, մի շարք ցեղեր շփումների մեջ մտան անգլիացիների հետ, առաջ քաշելով որոշ նախապայմաններ: Այսպես, Սոուջբուլաղի շրջանում բնակվող մուքրի քրդերը բանակցություններ սկսեցին Քերմանշահում (ներկայումս Բախթարան) նստող անգլիական հյուպատոսի հետ, նրան հավաստիացնելով, որ պատրաստ են ընդունելու անգլիացիների առաջարկները: Միաժամանակ հյուպատոսի հետ բանակցողները խորհրդապահորեն նրան հայտնեցին, որ քրդերը կարող են աջակցել «դժվարին հայկական հարցի լուծմանը», պայմանով, որ անգլիացիներն էլ իրենց համաձայնությունը տան բրիտանական հովանու ներքո «անկախ Քրդստան» ստեղծելուն:[10] Անտարակույս քրդերի կողմից սա միանգամայն նոր հարցադրում էր, որը դատելով հետագա իրադարձություններից, հետաքրքրեց անգլիացիներին: Հարցի ավելի ընդլայնված ֆորմատով 1918թ. հունիսին Ժենևում բանակցություններ սկսվեցին բրիտանական հայտնի քաղաքական գործիչ Պերսի Քոքսի և քուրդ ազգայնական, թուրքական բանակի գեներալ Շերիֆ–փաշայի միջև: Բանակցությունների թեման այսպես կոչված Իրաքյան Քրդստանի (Մոսուլ կենտրոնով) ինքնավարության հարցն էր, որը գեներալի կարծիքով նույնպես պետք է գտնվեր բրիտանական հովանու ներքո: Ընդորում Շերիֆ–փաշան խորհուրդ էր տալիս այդ ինքնավարությունը հռչակել մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի բացումը և դրանով իսկ պետություն-

ներին դնել կատարված փաստի առջև: Հանդիպման ընթացքում քննարկման առարկա դարձավ նաև հայ–քրդական հարաբերությունների հարցը: Երկու ժողովուրդների միջև առկա և ընթացքում ծագող հակասությունների համար Շերիֆ–փաշան առաջարկեց Լոնդոնում ստեղծել մի մշտական գործող կոմիտե: Սակայն նրա առաջարկությունների այդ ամբողջ փաթեթը մնաց անիրագործելի և ընթացք չտրվեց անգլիացիների կողմից առաջին հերթին այն պատճառով, որ նրանք բնավ մտադրություն չունեին քրդերին հատկացնել ինքնավարություն, առավել ևս անկախություն: Ընդհակառակը, 1916թ. Սայքս–Պիկոյի գաղտնի պայմանագրով Միջագետքը Մոսուլի նավթաբեր շրջանով հանդերձ մտնում էր բրիտանական շահերի գոտու մեջ: Բացի այդ, անգլիացիները որպես քաղաքական գործիչ մեծ համարում չունեին Շերիֆ–փաշայի մասին, նրան համարելով քրդական վերնախավի շրջանում աննշան ազդեցություն ունեցող մարդու և ամենակարևորը տեղական քրդական արմատներից կտրված անձնավորության:[11] Ուստի և նրա հետ վարվող բանակցությունները անգլիացիների համար կրում էին նախնական զոնդաժի բնույթ:[12]

Վերոհիշյալ իրադարձությունների ընթացքում օսմանյան ռազմարշավը Հայաստանում ու Անդրկովկասում շարունակվում էր: Թուրքական հսկա ուժերի առջև հայությունը տեղի տվեց: 1918թ. հուլիսի սկզբին Հայաստանի վզին փաթաթվեց Բաթումի տխրահռչակ պայմանագիրը, որը փաստորեն Հայաստանը վեր էր ածում օկուպացված երկրի: Ողջ Արևմտյան Հայաստանը վերանվաճվեց թուրքական զորքերի կողմից, իսկ Արևելյան Հայաստանը սեղմվեց .11 հազար քառ. կիլոմետր ունեցող սահմանների մեջ:

1918թ. մայիսի 28–ին Հայաստանի անկախության հռչակումը նոր մտահոգություններ պատճառեց քրդերին: Թեև հայկական փոքրիկ հանրապետությունը «կը կծկվեր իր նեղ մորթին մեջ... քյուրտերը, սակայն, սկսան մտածել, որ անկախ Հայաստան մը գոյություն ունի, վոքր կամ մեծ, այդ մանուկը վաղը կրնա մեծնալ»:[13] Բացի այդ, քրդերը արդեն կատարելապես տեղյակ էին, որ Մեծ Բրիտանիան թուրք քաղաքական գործիչների հետ անջատ բանակցություններում հարց էր բարձրացել Հայաստանում, Սիրիայում, Միջագետքում, Պաղեստինում ու Արաբիայում «ինքնա-

վար կառավարությունների» ստեղծման մասին, միանգամայն զանց առնելով քրդական հարցը:[14]

Անդրադառնալով 1918–1919թթ. հայ–քրդական հարաբերությունների զարգացումների հարցին, Կ. Սասունին, որը համարվում էր քրդական հարցի գիտակ, գրում է.«Հայաստանի Հանրապետությունը միջոց չունեցավ մտածելու քրտո–հայ հարաբերությունների մասին: Հայկական հարցը ընդհանուր ընդունելություն գտած էր: Լայն Հայաստանի խնդիրը լուծված կը նկատվեր: Աշխարհի հզորներու խոստումները շատ էին ու հայկական դյուրահավատությունը անկարևոր խնդիր մը նկատած էր մեր և փոքր դրացիներու փոխհարաբերությունը: Քյուրտերը (Հայաստանին սահմանակից և մաս մըն ալ Հայաստանի սահմաններեն ներս) հաշտության և համագործակցության մտածումը երբեք չունեցան»:[15] Իր այդ գնահատականի մեջ Կարո Սասունին իսպառ զանց է առնում այն իրողությունը, որ հայերի և քրդերի շահերը տվյալ պատմական ժամանակաշրջանում կատարելապես ներհակ էին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր արտաքին քաղաքականության գերխնդիրն էր համարում Արևմտյան Հայաստանի տարածքում հայկական պետականության վերականգնումը կամ ծայրահեղ դեպքում այդ տարածքների միացումը Արարատյան Հանրապետությանը, մի հանգամանք, որը կտրականապես մերժվում էր քրդերի կողմից ե առաջ բերում նրանց վճռական հակազդեցությունը, այդ թվում նաև զինված ճանապարհով: Դա միանգամայն հասկանալի էր, որովհետև քրդերը երազում էին այդ նույն տարածքների վրա ստեղծել «անկախ Քրդստան»: Այս իրողությունը կատարելապես անհիմաստ էր դարձնում «փոքր դրացիների» հետ վտխհարաբերությունների զարգացումը: Բացի այդ, հենց ինքը՝ Կարո Սասունին, հակասելով ինքն իրեն, իրավացիորեն նշում է, որ քրդերը «հաշտության և համագործակցության մտածումը երբեք չունեցան», թեև հայ գործիչների կողմից 19–րդ դարի կեսերից սկսած ընդհուպ մինչև առաջին աշխարհամարտի բռնկվելը, այդպիսի առաջարկություններ բազմիցս կատարվել էին:[16] «Հայերը, 1919թ. աշունեն սկսած, մտահոգված էին Տաճկահայաստանի վերագրավման խնդրով,— շարունակում է Կ.Սասունին: Եվ պետք է ըսել, թե ամենեն մեծ խոչընդոտը քրտական թշնամի զանգվածը կը ներկայանար: Հայաստանի Հանրապետությունը կը գիտակցեր թրքական ուժի մեծության: Կը

տեսներ, որ տն հետզհետե կը վերակազմվի և եթե հայկական հարցը չլուծվի խորհրդաժողովներուն մեջ, մեր սահմաններուն վրա այդ հարցի կարգադրությունը սվինի ներկայության պետք պիտի ունենա»:[17]

1918 թ. հոկտեմբերի 30–ին ստորագրված Մուդրոսի զինադադարը նշանակում էր Օսմանյան կայսրության փաստական կապիտուլյացիա Համաձայնության պետությունների առջև: Տասներկու օր անց հանձնվեց նաև Գերմանիան: Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց: Մուդրոսի զինադադարը, սակայն, աղետալի եղավ հայ ժողովրդի համար: Այն ըստ էության հանդիսացավ «հայկական ըղձանքներուն տրված առաջին հարվածը»:[18] Այդ զինադադարի կետերի մեջ բացակայում էր թուրքական ուժերի զինաթափման և դաշնակիցների զորքերի կողմից հայկական նահանգների գրավման վերաբերյալ որևէ հոդված: Ամենավտանգավորը սակայն թերևս այն էր, որ Մուդրոսում մեծ վեզիր Իզզեթ–փաշան առաջ քաշեց Թուրքիայի և կովկասյան ժողովուրդների դաշնություն ստեղծելու հարցը՝ թեև դաշնակիցների հովանու ներքո, սակայն իրականում այդ դաշնությունում Թուրքիային էր պատկանելու «մեծ եղբոր» կարգավիճակը: Հայերին վերաբերող 24–րդ հոդվածում տրվում էր հետևյալ ձևակերպումը. «Հայկական վիլայեթներից (որևէ) մեկում անկարգություններ ծագելու դեպքում դաշնակիցները իրենց վերապահում են նրա մի մասը գրավելու իրավունք»:[19] Ակնհայտ էր, որ արևմտահայությունը չէր կարող որևէ ակնկալիք ունենալ այդ անորոշ, ոչ մի կոնկրետ հարցի լուծման չմիտված հոդվածից: Մուդրոսի զինադադարը կտրուկ մեծացնում էր բրիտանական ազդեցությունը Արևելյան Անատոլիայում, որովհետև անգլիացիները լցնում էին այն վակումը, որն առաջացել էր ռուսական զորքերի հեռանալու պատճառով: Զինադադարի 7–րդ հոդվածը դաշնակիցներին (իմա՝ անգլիացիներին) իրավունք էր վերապահում գրավման ենթարկել Թուրքիայի ցանկացած ռազմավարական կետ, «եթե հանգամանքները դառնային սպառնալից դաշնակիցների անվտանգության համար»: Չնայած այն հանգամանքին, որ Մուդրոսի զինադադարը միանգամայն անպտուղ ու անօգուտ երևույթ էր հայկական հարցի համար, սակայն քրդական վերնախավը այն գնահատեց որպես հայերի օգտին ձեռնարկված հերթական մի քայլ: Դա մեծացրեց քրդերի կասկածները անգլիացիների նկատմամբ, որոնց թվաց, թե հայերի

և քրդերի հետ հարաբերությունների հարցում անգլիացիները իրականացնում են կողմնապահ քաղաքականություն՝ անտեսելով քրդերի շահերը: Հետևաբար հայկական հարցը դառնում էր մի փոքրաքար քրդական գործիչների հետ Անգլիայի իրականացրած հարաբերություններում: Մուդրոսի զինադադարի կնքումից անմիջապես հետո թուրքական կառավարության թույլտվությամբ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն խթանեց քրդական գործունեությունը Արևմտյան Հայաստանում՝ քրդական մեծամասնություն հաստատելու և Կովկասից ու Իրանից հայ գաղթականների վերադարձը արգելելու համար: Այդ նպատակով երիտթուրքական սպաները քրդերից տենդորեն կազմակերպում էին նաև «չեթե» հրոսակախմբեր:

1918թ. հոկտեմբերին բրիտանական զորքերը գեներալ Ու. Մարշալի հրամանատարությամբ ձեռնամուխ եղան Մոսուլի գրավմանը, որն այդ ժամանակ դեռ գտնվում էր թուրքերի ձեռքում: Նոյեմբերի 10–ին ողջ Մոսուլի վիլայեթը արդեն գրավված էր անգլիական զորքերի կողմից:[20]

Թուրքական արձագանքը Մոսուլի նավթաբեր շրջանի կորստի վերաբերյալ վերին աստիճանի սուր էր: Այդ վիլայեթի քրդական հոծ բնակչությանը անգլիացիների դեմ հրահրելու նպատակով, թուրքերը լծվեցին բուռն հակաանգլիական քարոզչության, լայնորեն օգտագործելով նաև «հայկական սպառնալիքի» վերաբերյալ վարկածը: Միաժամանակ թուրքական գործակալությունը սկսեց լուրեր տարածել, որ այդ վայրերում ոչ շատ վաղուց տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքով «դուրս քշված» ասորիները, անգլիական զենքերով զինված, վերադառնում են Մոսուլի վիլայեթ՝ քրդերի դեմ վրիժառության պատերազմ մղելու համար:[21] Կրքերն ավելի բորբոքելու համար, որպես հարյուր տոկոսանոց ճշմարտություն, թուրքերը նաև թռուցիկներ էին տարածում այն մասին,որ անգլիացիների աջակցությամբ շուտով ստեղծվելու է անկախ հայկական պետություն, որի սահմանների մեջ են մտնելու նաև բուն քրդական հողերը:[22] Հակահայկական կրքերի բորբոքումը ձեռնտու էր նաև քրդական ցեղային և հոգևոր վերնախավին: Ուստի նա ևս մեծ եռանդով լծվեց էքնիկական նախապաշարուների և մահմեդական շովինիզմի վրա խարսխված քարոզչության ծավալմանը: Եռյակ Համաձայնության երկրների և ԱՄՆ–ի կողմից հայկական հարցի արծարծում-

ները քրդական վերնախավի կողմից մեկնաբանվում էր որպես անվիճելի ապացույց այն իրողության,որ քրիստոնյա պետություններն ու նրանց «հայկական գործակալությունը» դավադրություն է նյութում քուրդ–մահմեդականների դեմ: Կառչելով այս մտացածին վարկածից, իթթիհադականներն ու թուրք ազգայնականները սկսեցին ճարպկորեն ահաբեկել մահմեդական զանգվածներին ու հատկապես քրդերին, «հայ–քրիստոնեական» սպառնալիքի ուրվականով,[23] միաժամանակ աշխատելով իրենց կողմը ներգրավել տարածաշրջանի իրական ռազմա–քաղաքական ուժը՝ քրդական առաջորդներին և նրանց զինված ջոկատները, որոնք թուրքերի կարծիքով ունակ էին հակակշռելու բրիտանական քաղաքականությանը: Հատկանշական է, որ հակաանգլիական այդ քարոզչությունը գաղտնի աջակցություն էր գտնում նաև Ստամբուլի իթթիլյաֆիստական կառավարության կողմից, որը համարվում էր բրիտանամետ: Հատկապես Միջագետքի հյուսիսում, Մոսուլի նահանգում, թուրք–քրդական քարոզչական պատերազմը այնպիսի վտանգավոր չափեր ընդունեց, որ բրիտանական վարչությունը 1919թ. մայիսի 12–ին պաշտոնապես հայտարարեց, որ այն տարածքները, որոնց վրա գերազանցապես բնակվում են քրդեր, ազատ են լինելու «հայկական հավակնություններից»:[24] Սակայն այդ հայտարարությունը չբվարարեց քրդերին, որոնք անգլիացիներից պահանջում էին ռեալ երաշխիքներ: Այսպես, 1919թ. մայիսին Բաղդադում անգլիացիների հետ բանակցությունների ժամանակ սեյիդ Թահան հայտարարեց, որ ինքը պատրաստ է համագործակցել նրանց հետ պայմանով, որ ընդունեն իր մի քանի պահանջները, այդ թվում նաև հետևյալը. քրիստոնյա ժողովուրդների (խոսքը հայերի և ասորի–նեստորականների մասին է— Վ.Բ.) վերադարձը քրդաբնակ շրջաններ չպետք է հանգեցնի նրանց տիրապետության հաստատմանը քրդերի նկատմամբ: Անգլիական վարչությունը մասամբ ընդունեց այդ պահանջը, շահագրգռված լինելով Սուլեյմանիեի քրդերի ապստամբությանը սեյիդ Թահայի աջակցության մեջ: Իր հերթին Իրաքում բրիտանական վարչության ղեկավար Արնոլդ Վիլսոնը Թահային հղեց մի նամակ, որտեղ ի թիվս մի շարք այլ խնդիրների, խոստանում էր նաև իր բարի ծառայությունները հայերի հետ քրդերի հաշտեցման գործում, ինչպես նաև քրդական շահերի պաշտպանությունը առաջիկայում գումարվելիք Փարիզի խաղա-

ղության վեհաժողովում:[25] Միանգամայն ակնհայտ էր, որ հայերի և քրդերի հետ հարաբերությունների հարցում բրիտանական դիվանագիտությունը որոշել էր կիրառել բարդ խուսանավումների քաղաքականություն, նպատակ ունենալով նրանց երկուսին էլ պահել իր քաղաքական ազդեցության շրջանակների մեջ: Ըստ այնմ սկսեցին երևան գալ հայկական և քրդական առանձին պետությունների ստեղծման անգլիական նախագծեր, որոնց իրականացման ցանկությունը, սակայն, հավասար էր զերոյի և ամենակարևորը այդ խոստումները ոչնչով պարտավորեցնող չեին անգլիացիների համար: Այսպես, դեռևս 1918թ. դեկտեմբերին, բրիտանական ռազմական մինիստրության ներկայացուցիչ Ֆ. Մառնսելը առաջ քաշեց մի այդպիսի նախագիծ, ըստ որի հայկական պետությունը զբաղեցնելու էր Վանա լճից մինչև Սև ծով ընկած տարածքը, իսկ քրդական պետությունը՝ Վանա լճից հարավ ընկած շրջանները:[26] Իսկ 1919թ. հունիսի 13–ին Բաղդադում բրիտանական քաղաքական ծառայությունը Արնոլդ Վիլսոնի գլխավորությամբ կազմեց մի փաստաթուղթ, որտեղ առաջ էր քաշվում իրաքյան և քրդական հարցերի միաժամանակյա լուծման մի նորացված նախագիծ: Նրանում տեղ էին գտել նաև հայկական ու քրդական առանձին պետությունների ստեղծման ծրագրեր: Այսպես, Տրապիզոնի և Էրզրումի վիլայեթները պետք է կազմեին հայկական պետություն ամերիկյան հովանու ներքո, իսկ Դիարբեքիր, Խարբերդ, Վան և Բիթլիս վիլայեթները՝ քրդական պետություն անգլիական հովանու ներքո: Մոսուլ, Բաղդադ, Բասրա վիլայեթներից կազմվելու էր արաբական պետություն՝ նույնպես բրիտանական հսկողության ներքո: Որպես այս ծրագրի եզակի այլընտրանք առաջարկվում էր թուրքական տիրապետության վերականգնումը հայկական վեց վիլայեթներում՝ եվրոպական հսկողության ներքո:[27] Դժվար չէ նկատել, որ սա ըստ էության նախապատերազմյան շրջանում մշակված «Հայաստանում իրագործվելիք բարեփոխումներին» վերադարձի մի ծրագիր էր, հստակ քրդամետ հակվածությամբ: Զարմանալին, սակայն, անգլիացիների նորահայտ քրդամետությունը չէր, այլ այն, որ հենց այդ նույն ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության կառավարության հետ շփումների ժամանակ անգլիական իշխանությունները գծում էին Հայաստանի միանգամայն այլ, անհամեմատ ընդարձակ սահմաններ:

1919թ. սկզբին, Ստամբուլում, «Քրդստանի վերածնության ընկերության» ներկայացուցիչները, որոնց հաճախ անվանում էին նաև երիտքրդեր, պահանջեցին հայտարարել Քրդստանի անկախության մասին և «քրդական նահանգներից» վտարել բոլոր օտարերկրյա, այդ թվում նաև թուրքական ուժերին: Ընկերության նախագահ սեյիդ Աբդուլղադերը կտրուկ հանդես եկավ երիտքրդերի այդ առաջարկի դեմ, վկայակոչելով այն հանգամանքը, որ թուրքերը համաձայնվել են ստեղծելու սուլթանից կախում ունեցող ինքնավար Քրդստան (Աբդուլղադերը նկատի ուներ ընկերության ստորագրած համաձայնագիրը «Հյուրրիեթ վե իթթիլյաֆ» կառավարող կուսակցության հետ): Այնուհետև սեյիդ Աբդուլղադերը խորհուրդ էր տալիս ընկերության երիտասարդ անդամներին մեկնել քրդաբնակ շրջաններ և այնտեղ քարոզչություն մղել ընկերության ծրագրի շրջանակներում, ինչպես նաև բոլոր ուժերով հակազդել ու դիմակայել ԱՄՆ–ի նախագահ Վուդրո Վիլսոնի սկզբունքներին համապատասխան անկախ ազգային հայկական պետության ստեղծմանը: Աբդուլղադերը վճռականորեն հանդես էր գալիս հայերի և քրդերի միավորման դեմ՝ հայկական և քրդական հարցերը լուծելու համար: Նա կտրականապես դեմ էր նաև սուլթանաթից ու խալիֆաթից անկախ քրդական պետության ստեղծմանը:[29]

1919թ. հունվարի 18–ին Փարիզում բացված խաղաղության վեհաժողովում հայկական զույգ պատվիրակությունները՝ Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբարի գլխավորությամբ, վերստին բարձրացրին հայկական հարցը: Բնականաբար այդ իրադարձությունը խորը տագնապի զգացումներ էր առաջ բերելու քրդական ազգայնական շրջանակներում, մանավանդ, որ Փարիզում հայ պատվիրակության կողմից բարձրացվում էր արևմտահայ գաղթականների վերադարձի հարցը: 1919թ. մայիսի 7–ին Փարիզի հայկական տեղեկատվական բյուրոն հաղորդում էր, որ ըստ լավատեղյակ աղբյուրների, քրդերը ծավալել են տենդագին գործունեություն հայկական տարածքներում մեծամասնություն կազմելու նպատակով, որպեսզի Կովկասում և Պարսկաստանում ապաստանած հայ փախստականներին թույլ չտան վերադառնալ Արևմտյան Հայաստան: Տեղեկատվության մեջ ասվում էր նաև, որ քրդերը, անհրաժեշտության դեպքում, կոտորում են հայերին: Տեղեկատվությունը կազմողների կարծիքով, այս շարժումը կազմա-

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿադեմիայի գրադարան

կերպվում և ղեկավարվում է Կոստանդնուպոլսից:[30] Փարիզում դաշնակիցների առջև քրդերի շահերի պաշտպանության դերում հանդես եկավ Շերիֆ–փաշան: Այս անձնավորությունը սուլթան Աբդուլ Համիդ 2–րդի կառավարման տարիներին աշխատել էր Բեռլինի և Ստոկհոլմի թուրքական դեսպանություններում: «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի իշխանության գլուխ գալուց հետո նա Փարիզում հրատարակում էր երիտթուրքերի դեմ ընդդիմադիր «Մաշրութիեթ» թերթը:[31] Վերսալի կոնգրեսում, թուրքական պատվիրակության անդամ էր Շերիֆ–փաշան, որը սակայն կոնֆերանսի ժամանակ, իր վրայից ցած դրեց թուրքական պատգամավորի պարտականություն–ները և «Քրդստանի վերածնության ընկերության» առաջարկով, իրեն հայտարարեց «քրդական պատվիրակության նախագահ»: Փարիզի վեհաժողովի դիվանագիտական շրջաններում նրան չճանաչեցին որպես «քրդական պատվիրակության ղեկավար», առավել ես, որ նման ոչ մի պատվիրակություն գոյություն չուներ: Այսպիսով, Շերիֆ–վաշան քուրդ մտավորականության կամ ազդեցիկ ցեղերի կողմից չէ որ ընտրված էր որպես Փարզի վեհաժողովի պատգամավոր, թեև նա ուներ նաև մի շարք քուրդ ղեկավարների համաձայնությունը, վարելու քրդական դատը Փարիզում: «Շերիֆ–փաշան հստակ գաղափար չուներ Քյուրդիստանի անկախության և անոր հավանական սահմաններու մասին: Մյուս կողմեն ան տակավին Թուրքիո հին պաշտոնյաի հոգեբանությունն ու նկարագիրն ուներ և կաբելի չեր ըսել, թե թրքական դիվանագիտական դարձվածքները նկատի չէր առներ, երբ քրդական հարցը կը հետապնդեր»,— գրում էր Կ. Սասունին:[32]

1919թ. մարտի 22–ին Շերիֆ–փաշան խաղաղության վեհաժողովին ներկայացրեց (նույն թվականի փետրվարի 6–ի թվակիր)[33] մի հուշագիր քրդերի պահանջների մասին և տարբեր փաստաթղթեր քրդական բաղձանքների վերաբերյալ: Այդ հուշագրում շարադրված էին «քուրդ ազգի օրինական պահանջները», որոնք հակադրվում էին «Հայաստանի իմպերիալիստական հավակնություններին»: Շերիֆ–փաշան իր պահանջները ճգնում էր հիմնավորել նրանով, որ քրդերը ոչ միայն ճնշող մեծամասնություն են կազմում հայերի բնակեցրած երկրամասերում, այլև ունեն նաև այն առավելությունը, որ «հակառակ հայերի» միատարր են: Շերիֆ–փաշայի հուշագիրը պահանջում էր անկախ քրդական պետութ-

յան ստեղծում ԱՄՆ–ի նախագահ Վուդրո Վիլսոնի հռչակած «14 կետերի» սկզբունքներին համապատասխան, ինչպես դա արվում էր Հայաստանի և Արաբիայի կապակցությամբ: Ընդորում, նա Վիլսոնի հռչակած ազգերի ինքնորոշման իրավունքը հասկանում ու մեկնաբանում էր յուրովի: Նա առաջարկում էր ստեղծել միջազգային մի հանձնաժողով, որի խնդիրն էր լինելու գծել ապագա Քրդստանի սահմանները «ազգության» սկզբունքով՝ ներառելով նրա մեջ բոլոր այն տարածքները, որտեղ քրդերը կազմում էին մեծամասնություն: Ընդորում նա փորձում էր շահարկել այն հանգամանքը, որ 1915թ. ցեղասպանությունից հետո հայկական վեց վիլայեթներում հայ ազգաբնակչության թիվը կտրուկ նվազել էր և այդ ֆոնի վրա քրդերը ստացել էին առավելություն: Հենց դա էլ նրան համարձակություն էր տալիս առաջարկելու, որ անցկացվի պլեբիսցիտ: Ապագա միջազգային հանձնաժողովին «կողմնորոշելու» համար Շերիֆ–փաշան, իբրև ապագա Քրդստանի տարածք, առաջարկում էր Դիարբեքիրի, Խարբերդի, Բիթլիսի, Մոսուլի վիլայեթները և Ուրֆայի սանջակը: Սակայն սա մինիմում պահանջ էր, որը գեներալը անվանում էր «անկատար Քրդստան» կամ «Արևմուտքի համակրանքը վայելող հայերի համար նպաստավոր պայմաններով ստեղծված Քրդստան»: Նա գտնում էր, որ եթե աշխարհի ուժեղները «ցանկանային արդարացիորեն կիրառել ազգության սկզբունքը», ապա երկիրը, որտեղ քրդերը մեծամասնություն են կազմում, կտարածվեր շատ հեռուները՝ դեպի հարավ–արևելք, հյուսիս–արևմուտք, կամ իր մեջ կներառներ Էրզրումի վիլայեթի մի պատկառելի մասը և պարսկական Քրդստանը:

Համաձայն Շերիֆ–փաշայի «մաքսիմում ծրագրի», Քրդստանի սահմանները հյուսիսում անցնելու էին կովկասյան սահմանով, արևմուտքում՝ Էրզրում–Էրզինջան–Արաբկիր–Դիվրիկ գծով, հարավում՝ Սինջարի, Թել–Աֆարի–Էրբիլի–Քիրքուքի–Սուլեյմանիեի լեռներով և Սեննեյով (Սեննենդեջ), արևելքում՝ Ռեվանդուզ–Բաշկալե գծով և ապա իրանական սահմանով մինչև Արարատ լեռը: Այսպիսով, Հայաստանի նշանակալից մասը թուրքական բանակի քուրդ գեներալը մտցնում էր Քրդստանի մեջ: Որպես դրա «հիմնավորում» նա բերում էր հետևյալ մտացածին փաստարկները. նրա կարծիքով Քրդստանի հարցը լուծելիս պետք է նկատի ունենալ, որ քրդերի ազգային հարստությունը կազմում է բացառապես ոչխարաբուծությունը, որը պահանջում է,

կլիմայի պատճառով, ամառային և ձմեռային արոտավայրերի առկայություն: «Եթե այդ արոտավայրերից գեթ մեկը դուրս մնա Քրդստանին հատկացված ապագա սահմանից, ապա տնտեսական կյանքը ուժգնորեն կխաթարվի և ժողովուրդը կարճ ժամանակամիջոցի ընթացքում կմատնվի թշվառության»,— դատում էր գեներալը: Այդ դեպքում, նրա կարծիքով, քրդերը ստիպված կլինեն զբաղվել ավազակությամբ և հարևանների հողերի ասպատակությամբ՝ ստեղծելով մշտական անհանգիստ վիճակ: Շարունակելով ահաբեկել տերություններին, նա գտնում էր, որ եթե նոր ստեղծվելիք Հայաստանի մեջ ընդգրկվեն այնպիսի տարածքներ, որտեղ քրդերը մեծամասնություն են կազմում, ապա անկասկած, ռազմատենչ ու իրենց ազգային անկախության նախանձախնդիր այդ ցեղերը չեն կարողանա հանդուրժել այդ բանը, որի հետևանքով ապագա Հայաստանում անկարգությունը կթագավորի անընդմեջ, եթե իհարկե դաշնակիցները այնտեղ մշտապես ուժեղ բանակ չպահեն, որն իր հերթին կենթարկվի պարտիզանական պատերազմի բոլոր հարձակումներին: Վերջապես հուշագրում ասվում էր, որ Քրդստանի բոլոր բնական հարստությունները պետք է պատկանան միայն քրդերին:[34] Շերիֆ–փաշան ճգնում էր արդարացնել քրդերի կողմից հայ փախստականների հողերի զավթումը և նրանց վերադարձը իրենց հայրենիքը բացառելու միտումով, դիմում էր քաղաքական շանտաժի, քաջ տեղյակ լինելով փարիզի վեհաժողովի մասնակիցների ճաշակին ու նրանց ծրագրերին: «Ասիայի բոլոր ժողովուրդներից միակը քուրդ ժողովուրդն է,— գրում էր նա,— որն իվիճակի է ձևավորել առաջնակարգ բուֆերային պետություն բոլշևիկյան հեղեղի առջև ճանապարը փակելու համար, նկատի ունենալով, որ հայերը ուժգնորեն վարակված են այդ վտանգավոր գաղափարներով և նրանց քաղաքական կուսակցությունների միջև գոյություն ունեցող անտագոնիզմի ու դրանց հեղափոխական կոմիտեների մրցակցության պատճառով երբեք չեն կարող նույն երաշխիքները տալ իրենց հարևաններին: Բոլշևիկյան գաղափարները կայծակնային արագությամբ ներթափանցում են հայերի մեջ և չկա այդ սոսկալի վարակը կանգնեցնելու կարող սահման: Միայն մահմեդական երկրներն են դիմացկունակ և չեն վախենում այս ահեղ վարակից»:

«Շերիֆ–փաշայի հուշագրի քաղաքական արդյունավետությունը,— գրում է ռուս քրդագետ Մ. Լազարևը,— հավասար էր

զերոի: Այդ փաստաթղթին, ինչպես նաև նրա հեղինակին Փարիզի կոնֆերանսի առաջին դեմքերը ոչ մի նշանակություն չտվեցին, քանի որ նրանց հետևում ոչ ոք կանգնած չեր, որոնց հետ կարելի էր հաշվի նստել»:[35] Միանգամայն ժամանակավրեպ ու քաղաքականապես սնանկ էր նաև Շերիֆ–փաշայի հուշագրի հայատյաց ոգին, որովհետև Թուրքիայի վերաբերյալ դիվանագիտական որոշումների մեջ հայկական հարցը այդ ժամանակ գրավում էր ոչ վերջին տեղերից մեկը և Հայաստանի ու հայ ժողովրդի խնդիրները դիվանագիտական աշխարհի հրատապ քննարկման հարցերից մեկն էր հանդիսանում: Մինչև իր հուշագիրը Փարիզի վեհաժողովին ներկայացնելը, 1919թ հունվարին Շերիֆ–փաշան դիմել էր Անգլիային, խնդրելով նրա աջակցությունը քրդական պետության ստեղծման գործում,[36] որը պետք է լիներ Անգլիայից կախյալ, կամ ինչպես ինքն էր անվանում՝ «անգլիական պրոտեկտորատ»: Նրա քաղաքական կարգավիճակը Շերիֆ–փաշան համարում էր էմիրությունը, իսկ իրեն առաջարկում էր որպես էմիրի թեկնածու:[37] Հարցը նրանում էր, որ այդ նույն պաշտոնին հավակնում էին նաև քրդական այլ ղեկավարներ. Աբդուլ Ղադերը, Սուրեյա Բաղրխանը, Սուլեյման Նազիֆը և ուրիշներ: Նրանք բոլորը «ինքնավար» կամ «անկախ Քրդստանը» պատկերացնում էին բրիտանական հովանու տակ գտնվող մի երկիր: Սակայն Անգլիան չեր շտապում արձագանքել քրդական ազգայնականների վերոհիշյալ առաջարկներին: Դրա կարևորագույն պատճառներից մեկն այն էր, որ քուրդ ազգայնականները, իրենց քաղաքական տկարության և սահմանափակ ազդեցության պատճառով, ի վիճակի չէին ռեալ կերպով ազդել Արևմտյան Հայաստանի քրդական բնակչություն ունեցող շրջաններում տիրող իրադրության վրա և նույն պատճառով, անգլիացիները Շերիֆ–փաշային նույնպես լուրջ չէին ընդունում: Նրան որպես առաջնորդ չէին ընդունում նաև քրդական շրջանները, որոնք նրան կնքել էին «քոշ հորուֆ» (փուչ տղա) մականունը: Չնայած հայկական հարցի նկատմամբ Շերիֆ–փաշայի բացասական դիրքորոշմանը-և «Անկախ Քրդստանի» վերաբերյալ նրա մաքսիմալիստական պահանջներին, Փարիզում գտնվող հայկական պատվիրակությունը անընդհատ քայլեր էր կատարում նրա հետ շփումների մեջ մտնելու և դիվանագիտության բնագավառում հայ–քրդական միացյալ ճակատ ստեղծելու համար: Ի վերջո այդ ջանքերն ավարտվեցին մասնակի հաջո-

ղությամբ և 1919թ. նոյեմբերի 20–ին խմբագրվեց մի համատեղ դիմում, հուշագրի ձևով, ուղղված խաղաղության համաժողովին, որի տակ ստորագրել էին հայկական Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը, Հայաստանի Հանրապետության պատվիրակության փոխնախագահ Համո Օհանջանյանը և «քրդական ազգային պատվիրակության նախագահ» Շերիֆ–փաշան:[38] Քանի որ այդ հուշագրի ամբողջական բնագիրը եվրոպական պատմական գրականության մեջ չի տրվում, այլ աղբյուր ձեռքի տակ չունենալու պատճառով, հարկ ենք համարում այն ներկայացնել քաղված՝ Կ.Սասունիի գրքից. «Հաշտության վեհաժողովին. Տեր Նախագահ, մենք, ներկա ստորագրյալներս, հայ և քյուրտ ազգերու ներկայացուցիչներ, պատիվն ունինք հայտնելու Հաշտության Վեհաժողովին, որ մեր երկու ժողովուրդները, երկուքն ալ արիական ցեղեն, ունին նույն շահերը և կը հետապնդեն նույն նպատակը, այսինքն իրենց ազատագրումը և անկախությունը: Մասնավորապես հայերը կձգտին ազատագրվիլ անգութ թրքական կառավարություններեն և ընդհանրապես, թե՝ հայերը և թե՝ քյուրտերը կը պահանջեն իրենց փրկությունը «Միություն և Առաջադիմություն» կոմիտեի լուծեն, որուն պաշտոնական և գաղտնի կառավարությունները այնքան աղետաբեր եղան թե՝ մեկին և թե՝ մյուսին:

Բոլորովին համաձայն ենք ուրեմն Հաշտության Վեհաժողովեն միասնաբար խնդրելու ստեղծումը, ըստ ազգայնությանց սկզբունքին, Սիացյալ Անկախ Հայաստանի մը և Անկախ Քյուրդիստանի մը, մեծ պետության մը օգնությամբ, որ պիտի որոշվի մեր ժողովուրդներու կամքը լսելեն հետո և որ մեր երկիրներուն պիտի տա իր տեքնիկական և տնտեսական օգնությունը՝ վերաշինության շրջանին համար:

Գալով վեճի նյութ եղող հողամասերուն, որոնք ցույց են տրված մեր երկու պատվիրակություններուն կողմե Հաշտության Վեհաժողովին հաջորդաբար ներկայացված հիշատակագիրներով, որոշապես կը հայտարարենք, որ այդ կարգադրությունը կը թողունք Հաշտության ժողովի որոշման, կանխավ վստահ ըլլալով, որ անոր վճիռը արդարության և իրավունքի հիման վրա պիտի դրվի:

Կը հաստատենք նաև մեր կատարյալ համաձայնությունը հարգելու համար փոքրամասնության օրինական իրավունքները մեր երկու պետության մեջ»:[39]

Այս համաձայնագիրը շշմեցնող ներգործություն ունեցավ եվրոպական դիվանագետների վրա, որովհետև մինչ այդ հայ–քրդական հարաբերություններում նրանց համար բնական ու սովորական երևույթ էր երկու ժողովուրդներին միմյանցից բաժանող թշնամանքը:[40]

Լորդ Քերզոնի շարադրմամբ, ըստ այդ եամաձայնագրի, հայերն ու քրդերը ունեն «նույնատիպ շահեր ու ձգտումներ, պահանջում են Թուրքիայից ազատություն և միացյալ անկախ Հայաստանի և անկախ Քուրդիստանի ստեղծում՝ մանդատային իշխանության ներքո»: Թուրքիայում Անգլիայի գերագույն կոմիսար ծովակալ դե Ռոբեքը հայ–քրդական համաձայնագիրն անվանեց «երջանիկ նախանշան»: 1919թ. դեկտեմբերի 20–ի իր հեռագրով, Քերզոնը հրահանգում էր Թուրքիայում գերագույն կոմիսարի գերատեսչությանը ամեն կերպ աջակցել այդ «շարժմանը»: Թերահավատություն դրսևորեց լոկ Արևելյան Միջերկրածովյան ավազանում բրիտանական ռազմա–ծովային ուժերի հրամանատար ծովակալ Վեբը, որը 1920թ. հունվարի 8–ին գրում էր, որ չնայած այդ համաձայնագրի ցանկալիությանը, այն առայժմ ոչինչ չտվեց (գլխավորապես այն պատճառով, որ Շերիֆ–փաշան անտեղյակ է երկրում գոյություն ունեցող իրական վիճակից և չի պատկերացնում «քուրդ ժողովրդի իրական ձգտումներն ու զգացումները)»:[41]

Վերոհիշյալ համաձայնագիրը միանշանակ ձևով չընդունվեց նաև հայկական շրջանակներում: Վաշինգտոնում Հայաստանի Հանրապետության դեսպան Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաջյան) մի բողոք–հայտարարություն հրապարակեց Պողոս Նուբարի և Համո Օհանջանյանի դեմ, որոնք համաձայնվել էին ստորագրել վերոհիշյալ համաձայնագրի տակ: Ըստ Արմեն Գարոյի, այդ համաձայնությամբ հայ ժողովուրդը «հողային որոշ իրավունքներ զիջած կըլլար քյուրդ ազգին և անոր միջամտությունը կը բերեր հայկական անվիճելի հողամասերուն մեջ»:[42] Մեկնաբանելով Արմեն Գարոյի այդ քայլը Կ. Սասունին գրում էր. «իհարկե այս բողոքին տոն կու տար այն տիրական մտայնությունը, որ այդ ժամանակ հայ քաղաքական մտքի ղեկավարները ունեին և կը կարծեին թե ծովե–ծով մեր հողային իրավունքները անվիճելի

էին»:[43] Խնդիրը վեճի նյութ դարձավ հայկական մամուլում: Ամբողջական Հայաստանի պատվիրակությունը, այսինքն Հայաստանի Հանրապետության և Ազգային պատվիրակությունը, միացյալ ձևով անհրաժեշտ համարեցին տալ հրապարակային մի բացատրություն և դրանով իսկ վերջ տալ վեճին: Ըստ այնմ, Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբարի ստորագրությամբ Փարիզից 1920թ. հունվարի 29–ի թվակիր մի հեռագիր ուղարկվեց Ամերիկա մամուլում հրապարակելու համար: Այնտեղ ասվում էր. «Վերջին ծայր ցավալի կը գտնենք, որ մամուլի մեջ վեճ հարուցած ըլլան հայ–քրտական համաձայնության մասին: Այդ համաձայնությունը,որ ստորագրված է Ազգային պատվիրակությունեն, ոչ մեկ կերպով չի վտանգեր հայկական շահերն ու պահանջները»:[44]

Պետք է նշել նաև, որ Շերիֆ–փաշան երկար չմնաց «քրդական պատվիրակության ղեկավարի» իր դերում: Նա հեռացավ իր այդ կարգավիճակից և տարբեր շրջանակներում իր կատարած հայտարարություններում ուրացավ հայերի հետ համաձայնության գոյությունը:

1919թ. մայիսի 19–ին հույները զորքեր հանեցին Իզմիր, ռազմական գործողություններ սկսելով Թուրքիայի դեմ: Սկսվեց հույն–թուրքական պատերազմ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական բանակի գեներալ Մուստաֆա Քեմալ փաշան, անմիջապես հեռացավ Ստամբուլից, հակահունական պայքարի ղեկը վերցնելով իր ձեռքը: Նրան հաջողվեց Անատոլիայում արագորեն ստեղծել իշխանության այլընտրանքային կենտրոն՝ Անգորա (Անկարա) մայրաքաղաքով: Սուլթանական բանակի մնացուկներից և գյուղացիական աշխարհազորային ջոկատներից նա ստեղծեց բանակի կորիզ և իր շուրջը սկսեց համախմբել համակիրների՝ «հայրենիքը վտանգի մեջ է» կարգախոսի ներքո: Թուրք ազգայնականների նախապես փոքրիկ խմբակը հետզհետե ուժ հավաքելով հանձինս ԹԱՄԺ–ի կառավարություն դառնալով, դառնում էր Անատոլիայի իրական տերը:

1919թ. աշնանից սկսած, ՀՀ քաղաքականության կարևորագույն խնդիրն էր Արևմտյան Հայաստանի վերագրավման հարցը: Այդ գործում ամենամեծ խոչընդոտը հանդիսանում էր քրդական թշնամի զանգվածը, որի մոտ կրկին արմատավորվել էր այն համոզումը, որ հայկական իշխանության պայմաններում իրենք կվերածվեն երկրորդական ուժի: Այս պարագաներում քրդերի համար

ծագում էր հետևյալ հարցը. ենթարկվել հայերին՞, թե՞ սիրով ընդառաջել թուրքերի վերադարձին: Քրդերի մեծամասնությունը թշնամական դիրք բռնեց հայերի նկատմամբ և գերադասեց գործակցել թուրքերի հետ: Այդ օրերին թե՛ թուրքական և թե՛ քրդական հասարակական կարծիքում հաստատուն կերպով արմատավորվեց այն տեսակետը, որ Արևմտյան Հայաստանում անխուսափելիորեն տեղի կունենա «Իզմիրի քաղաքականության» կրկնություն, այսինքն արևելքից Թուրքիայի վրա կգրոհի Հայաստանի Հանրապետությունը, որի արդյունքում կստեղծվի հայկական պետություն:[45] Այդ տեսակետը թուրք ազգայնականների՝ քեմալականների մոտ, վերածվեց սևեռուն գաղափարի, մանավանդ որ նրանք հանձինս հայերի տեսնում էին Համաձայնության երկրների նույնպիսի գործակալության, ինչպես և ի դեմս հույների: Ի դեպ, քեմալականները «հայկական հանրապետության» ուրվականը հաջողությամբ սկսեցին օգտագործել Ստամբուլի «Հյուրրիեթ վե իթթիլյաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցությունից կազմված կառավարության դեմ թշնամական քարոզչություն մղելու համար:[46] Հայկական պետության ստեղծման հեռանկարը ոչ պակաս չավտով քան քեմալականներին, անհանգստացնում էր նաև քուրդ ազգայնականներին և առհասարակ քրդական զանգվածին: Անկասկած այդ վախը կարող էր քրդերին մերձեցնել այնպիսի հակոտնյայի հետ, ինչպիսին Ստամբուլի թուրքական կառավարությունն էր, կամ միլլի–ազգայնականները, որոնք երկուսն էլ ոչ միայն չէին ընդունում հայերի անկախության ու սեփական պետականություն ունենալու ձգտումները, այլև պատրաստ էին իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով պայքարել դրա դեմ: Հետևաբար բոլոր հիմքերը կային շահերի ընդհանրության հողի վրա քրդերի մոտ թուրքամետ տրամադրությունների ուժեղացման համար: Միաժամանակ ակնառու կերպով զգացվում էր քրդերի հակահայկական տրամադրությունների շեշտակի վերելք, որովհետև նրանք ցանկանում էին պետություն ստեղծել հիմնականում այն նույն տարածքների վրա, որոնք հանդիսանում էին հայ ժողովրդի պատմական բնօրրանը: 1919թ. հուլիսի 29–ին բրիտանական ծովակալ Քալթորփը լորդ Քերզոնին գրում էր, որ «Մեծ Հայաստանի մասին խոսակցությունները բորբոքում են ազգային շարժման (իմա քեմալական շարժման.— Վ.Բ.) բոցը, օգտագործվում են ծայրահեղականների

կողմից և քրդերին նետելով թուրքերի գիրկը ամրապնդում են պանիսլամիզմի ուժերը»:[47] Իր մեկ այլ հաղորդագրության մեջ անգլիական ծովակալը տեղեկացնում էր բրիտանական արտաքին գործոց նախարարին, որ Թուրքիայի տարածքի «հունական օկուպացումը և իտալական ներխուժումը, զուգակցված ապագա Պոնտական հանրապետության և անկախ Հայաստանի մասին լուրերին, տագնապի և անհանգստության զգացումներ են արթնացրել Անատոլիայի մուսուլմանների մեջ, իդեալական հող ստեղծելով ազգայնական ագիտատորների գործունեության համար, որոնց հետ թույլ և սնանկ կենտրոնական կառավարությունն ի վիճակի չէ հաշվի նստել»:[48]

Բրիտանական կառավարությունը հայ–քրդական հարցի շուրջը սկսել էր մի ճարպիկ խաղ, որի նպատակը բնավ այդ երկու ժողովրդների ազգային իղձերին ընդառաջ գնալը չէր, այլ պարզապես միտված էր շիկացնել հարցը ի շահ սեփական երկրաքաղաքական նպատակների իրականացման: Այսպես, գնդապետ Վիլսոնը 1919թ. հունիսի 13–ի իր հեռագրում առաջարկում էր Տրապիզոնի և Էրզրումի վիլայեթներից կազմել մի միասնական հայկական պետություն՝ ամերիկյան հովանավորության ներքո, իսկ մնացյալ չորս վիլայեթներից՝ քրդական պետություն՝ ենթադրաբար բրիտանական հովանավորության ներքո: Այս առաջարկը այն աստիճանի արտառոց էր, որ կտրուկ առարկության հանդիպեց նույնիսկ բրիտանական քաղաքական շրջանների կողմից: Այսպես, անգլիական ծովակալ Ուեբբը իր 1919թ. օգոստոսի19–ի թվակիր նամակում գրում էր լորդ Քերզոնին, որ ինքը շատ լուրջ առարկություններ ունի գնդապետ Վիլսոնի առաջարկության կապակցությամբ: Ծովակալը գրում էր, որ գործնականում Տրապիզոնը հայկական բնակչություն չունի, մինչդեռ Վանը և Մուշը, որոնք միշտ էլ եղել են «միակ գերազանցապես հայաբնակ շրջանները Թուրքահայաստանում», պետք է թողնվեն քրդական պետությանը: «Դա կդիտվեր,— նշում է ծովակալը,— իբրև դավաճանություն հայկական շահերին և ուղղակի կհակասեր այն հավաստիացումներին, որոնք տրվել են հայերին դաշնակից տերությունների կողմից»: Վերջում ծովակալը ավելացնում էր, որ «բոլորովին անժամանակ և խիստ վտանգավոր կլինի փորձել ներկայումս սահմանագծել Հայաստանի և Քուրդիստանի սահմանները»:[49]

Գաղտնիք չէ, որ առաջին համաշխարհային պատերազմից հետո քրդական շարժման ծանրության կենտրոնը գտնվում էր ոչ թե Իրաքյան կամ Իրանական Քրդստանում, այլ հենց Արևմտյան Հայաստանում, և բնավ պատահական չէ, որ հենց այդ երկրամասն էլ դարձավ արթնացող քրդական ազգայնականության օրրանը: Այստեղ էր, որ քուրդ ազգայնականների կողմից ստեղծվեցին տարբեր «քրդական ակումբներ», որոնք իթթիհադականները ձգտում էին վերածել, համաձայն անգլիացի հետախույզ Գերտրուդա Բելլի դիպուկ արտահայտության, մի կուռ պատվարի «բրիտանական ինտերվենցիայի և հայերի դեմ»:[50]

Թե որքան լուրջ էր ընկալվում Արևմտյան Հայաստանի տարածքում թուրքական զանգվածի կողմից քրդական պետության ստեղծման հեռանկարը, երևում է հետևյալ փաստից. 1919թ. սեպտեմբերին բրիտանական կառավարությունը Արևմտյան Հայաստան գործուղեց հայտնի հետախույզ, քրդական հարցի ճանաչված գիտակ մայոր Նոյելին, պարզելու համար այդ երկրամասում քաղաքական ուժերի դասավորությունը, վարելու գործակալական–քաղաքական աշխատանքներ և առհասարակ հավաքելու համակողմանի տեղեկություններ: Մայոր Նոյելին ուղեկցում էին իրենց անգլիամետ հայացքներով հայտնի քուրդ ազգայնականներ Քամուրան և Ջելադեթ Բաղրխանները, որոնք հայտնի էին որպես քրդական պետության ստեղծման ջատագովներ: Ոտքի տակ տալով համարյա ողջ Արևմտյան Հայաստանը, անգլիացի հետախույզը իր համար պարզեց մի կարևոր հանգամանք, որն առաջին պահ զարմանք պատճառեց նաև իրեն: Պարզվեց, որ տեղական թուրք բնակչությունը, որը մեծ երկյուղներ ուներ այդ երկրամասում քրդական իշխանության հաստատման՝ լուրերի կապակցությամբ, գերադասում էր ավելի շուտ այնտեղ տեսնել հայկական, քան քրդական իշխանություն:[51]

Բրիտանական քաղաքական շրջաններում մի շարք գործիչներ հայտնում էին այն տեսակետը, որ հայկական և քրդական հարցերը սերտորեն փոխկապակցված են: Հնդկաստանի գործերի նախարարության փորձագետ Արթուր Խիրցելը իր հուշագրում հենց այդպես էլ գրում էր. «հայկական հարցը դա քրդական հարց է»: Նա գտնում էր,որ քրդական պետության ստեղծման համար առկա է ռեալ հեռանկար: Նրա կարծիքով, այդ պետության մեջ, որն ինքնստինքյան պետք է գտնվի անգլիական, ֆրանսիական

կամ ամերիկյան մանդատի ներքո, հայերը ևս կստանան իրավունքներ, ընդորում շնորհիվ իրենց հարաբերականորեն բարձր կուլտուրական մակարդակի ավելի մեծ իրավունքներ, քան իրենք կարող էին սպասել Հայաստանում իրենց թվաքանակի փոքրության պատճառով: Որպես պարզաբանում Խիրցելը նշում էր, որ այդ ենթադրյալ քրդական պետության մեջ հայերը կստանան մոտավորապես այն նույն իրավունքները, ինչ ենթադրվում էր տալ հնդիկ մահմեդականներին 1909թ. ընդունված Մորլի–Սինտո հայտնի օրենքով:[52] Անշուշտ Խիրցելի դատողությունները վկայում էին այն մասին, որ հայկական հարցով զբաղվող բրիտանական վերոհիշյալ հիմնարկությունը առանձնապես աչքի չէր ընկնում իր հայասիրությամբ: Ընդորում Արևմտյան Հայաստանի տարածքում Խիրցելի և նրան ձայնակցող քրդական գործիչների կարծիքով, հայկական պետության ստեղծումը հակասելու է «ինքնորոշման սկզբունքին», քանի որ պատերազմի ժամանակ «հայերի հետ տեղի ունեցած հայտնի իրադարձություններից» հետո (իմա՝ ցեղասպանության — Վ.Ք) Հայաստանում, ի բացառյալ Կիլիկիայի, շատ քիչ հայեր են մնացել և քրդերը չեն ցանկանա նրանց ենթարկվել: Այդ նույն տեսակետը բրիտանական գլխավոր շտաբի կապիտան Վուլլիի հետ զրույցում զարգացնում էր նաև քրդական Միլլի ցեղի առաջնորդ Մահմուդ–բեյը: Ընդորում նա փորձում էր հավաստիացնել անգլիացուն, որ դրսևորելով հանդուրժողականություն ու լայնախոհություն, Քրդստանի կառավարությունը բանակ կզորակոչի նաև հայերին, որպես ավելի կրթված մարդկանց, դրան ավելացնելով, որ քրդական դպրոցներ բացվելուց հետո քրդերը կրթական մակարդակով առաջ կանցնեն հայերից:[53]

Արևմտյան Հայաստանի ապագա կարգավիճակի վերաբերյալ միանգամայն այլ տեսակետ ուներ Բաղդադում անգլիական գլխավոր կոմիսար Արնոլդ Վիլսոնը: Նրա կարծիքով հայկական վեց վիլայեթներում պետք է պահպանվի թուրքական ինքնիշխանությունը: Հայկական կամ քրդական պետության ստեղծումը կախված է ԱՄՆ–ի կողմից Ասիական Թուրքիայի մի մասի նկատմամբ մանդատը վերցնելուց: Նա պնդում էր, որ բրիտանական կառավարությունը չպետք է այդ վիլայեթներում վերցնի լրացուցիչ պատասխանատվություն:[54]

Հայտնի պատճառներով 1919թ. գարնանից սկսված քեմալական շարժման նկատմամբ անգլիացիները որդեգրեցին թշնա-

մական դիրքորոշում: Ճիշտ է, առանձին վտրձեր կատարվեցին նաև հետևյալ սխեմայով՝ հենվելով Բ. Դռան վրա որպես Թուրքիայում իրենց քաղաքականության գլխավոր լծակի, իրենց բուռը հավաքել նաև քեմալականներին: Այս ծրագրի իրագործումը թվում էր միանգամայն ռեալ, մանավանդ որ Ստամբուլի իթթիլյաֆիստական կառավարության գլուխ էր կանգնած իրենց մարդը՝ մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշան, որն օգտվում էր սուլթան Մեհմեդ VI Վասիեդդինի կատարյալ վստահությունից: 1919թ. հոկտեմբերին մեծ վեզիրի պաշտոնում Ֆերիդ փաշային փոխարինած Ալի Ռիզա փաշան ևս համարվում էր անգլիացիների հետ կապված մարդ: Լոնդոնի տրամադրության տակ կար նաև պահեստային կամ այլընտրանքային տարբերակ՝ վտրձել քեմալականներին հաշտեցնել Ստամբուլի հետ և այդպիսով կրկին դառնալ դրության տերը: Սակայն կյանքը ցույց տվեց, որ անգլիացիների մշակած այդ երկու տարբերակներն էլ կենսունակ չեն և չունեն գործնականում իրագործվելու ռեալ հնարավորություններ:

Քեմալականները ուշի–ուշով հետևում էին Արևմտյան Հայաստանում ծավալվող իրադարձություններին և հավաստի տեղեկություններ ունեին այն մասին, որ քրդերը ծրագրեր են փայփայում անկախ պետություն ստեղծելու ուղղությամբ: Ժողովրդա–Հանրապետական կուսակցության երկրորդ համագումարում իր ելույթի ժամանակ Մուստաֆա Քեմալը առաջին անգամ հայտարարեց,որ «Քրդստանի վերածնության կազմակերպությունը», որն իր բաժանմունքներն ունի Դիարբեքիրում, Բիթլիսում և Խարբերդում, և որի ղեկավար կենտրոնը գտնվում է Կ.Պոլիսում, ձգտում է «ստեղծել քրդական պետություն՝ օտարերկրյա հովանու ներքո»:[55] Դիարբեքիրի վալիին հասցեագրած իր նամակում Քեմալը խորհուրդ էր տալիս չխստացնել հետապնդումները վերոհիշյալ քրդական կազմակերպության անդամների նկատմամբ, այլ ընդհակառակը, աշխատել ամեն կերպ նրանց ներգրավել իրենց կողմը և համախմբվելով նրանց հետ՝ հանդես գալ Եռյակ Համաձայնության դեմ՝ Անատոլիայում կյանքի կոչված «Թուրք ժողովրդի իրավունքների պաշտպանության» և «ընդդեմ աննեքսիայի» կազմակերպությունների շրջանակներում:[56] Իսկ 1919թ. հունիսի 21–ին «Կ. Պոլսի որոշ անձանց», այսինքն իր համախոհներին, Մուստաֆա Քեմալը գրում էր. «Անգլիական քարոզչությամբ ծնունդ առած շարժումները, օրինակ, այժմ ծավալվող շարժումը հանուն քրդա-

կան անկախության, երբ բարձրացել է կայսրության մասնատման հարցը, փառք աստծո, շրջվեցին մեր օգտին: Շնորհիվ այդ շարժման մասնակիցների հետ գրագրության, վերջիններս ընդգրկվեցին ընդհանուր գործի մեջ և մեզ հետ միասին համախմբվեցին խալիֆաթի ե թագի շուրջը: Մեր միջև հաստատվեց կատարյալ համաձայնություն և նրանք հրավիրվեցին կոնգրեսի» (խոսքը վերաբերում է «Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության կոնգրեսին», որը տեղի ունեցավ Էրզրումում 1919թ. հուլիսի 23–ից օգոստոսի 6–ը): Դժվար չէ կռահել, թե իր գրագրությամբ Քեմալը ինչ էր խոստացել քրդերին: Դա երևում է նաև նրանից, որ «Արևելյան վիլայեթների ազգային իրավունքների պաշտպանության ընկերությունը», «որի կազմի մեջ գտնվում էին նաև քրդեր, Էրզրումի կոնգրեսի օրակարգի քննարկմանը ներկայացրին նաև հետևյալ հարցերը. 1) արևելյան վիլայեթներում քարոզչության նպատակը, 2) թյուրքիզմի և քուրդիզմի խնդիրները, 3) տարբերություններ կրոնի մեջ և այլն»:[57]

Մակայն կոնգրեսի որոշումներից և նրա ընդունած մանիֆեստից երևում է, որ քեմալականները կտրականապես մերժեցին ազգային փոքրամասնությունների տարածքային և ցանկացած այլ ինքնավարության սկզբունքը: Ավելին, նրանք կարողացան ընդունել մի այնպիսի որոշում, որը պարտավորեցնում էր բոլոր մահմեդականներին, այդ թվում նաև քրդերին, պայքարել Արևմտյան Հայաստանի և այսպես կոչված Հյուսիսային Քրդստանի անջատման դեմ թուրքական պետականությունից: Մանիֆեստում շեշտվում էր, որ Փոքր Ասիայի արևելյան վիլայեթները, մասնավորապես Տրապիզոնի վիլայեթը և Ջանիկի սանջակը, ինչպես նաև Էրզրումի, Մվասի, Դիարբեքիրի, Խարբերդի, Վանի և Բիթլիսի վիլայեթները կազմում են մեկ ընդհանուր ամբողջություն և ոչ մի կերպ չեն կարող անջատվել կամ բաժանվել Օսմանյան կայսրությունից: Նշված տարածքների բոլոր ժողովուրդները կատարելապես համերաշխ են միմյանց հետ, լինի դա դժբախտության թե բարեկեցության օրերին և ձգտում են իրենց ապագային վերաբերող հարցերում հասնել միևնույն նպատակին: Նշված նահանգներում բնակվող մահմեդական տարրերը համակված են փոխադարձ հարգանքի և ինքնազոհաբերության միևնույն զգացումներով և իրենց համարում են միևնույն ծնողներից ծնված եղբայրներ:[58] Սա ոչ այլ ինչ էր, քան պանթյուրքիզմով շաղախված պա-

նիսլամիզմ, որն անհրաժեշտ էր թուրք ազգայնականներին, որպեսզի խաղալով կրոնական զգացումների վրա, իրենց շուրջը համախմբեն ոչ թուրք մահմեդական փոքրամասնություններին՝ քրդերին, լազերին, չերքեզներին և այլն և նրանց ուղղեն արտաքին թշնամու՝ հույների և հայերի ու առհասարակ քրիստոնյա բնակչության դեմ: Հատկանշական է, որ քրդական ցեղային վերնախավին ուղղված դիմումներում քեմալականները իրենց ներկայացնում էին որպես խալիֆաթի և ալլթանաթի ջերմ կողմնակիցներ: Անշուշտ այս քաղաքական վարվելակերպը կատարելապես բացահայտում է քեմալիզմի ամբոխավարական–պոպուլիստական էությունը:

Քրդերին իրենց կողմը գրավելու համար քեմալականները, մյուս բոլոր թուրքական ազգայնականների նման, առաջ քաշեցին ևս մեկ փորձված միջոց՝ հայկական հարցը: Նրանք այն հաջողությամբ օգտագործեցին քրդական ազգայնական շարժումը իրենց ցանկացած հունով տանելու համար: Քրդերի շրջանում քարոզչություն էր մղվում այն առումով, որ անհրաժեշտ է միավորվել թուրք բնակչության հետ ընդդեմ Հայաստանի տարածքային ոտնձգությունների: Զարգացվում էր նաև այն տեսակետը, որ թուրք–քրդական դաշինքի հիմք պետք է հանդիսանա այն, որ «թույլ չտրվի տարածքների բաժանումը թուրքական և քրդական մեծամասնության և տարբեր փոքրամասնությունների միջև, որոնք բնակվում են այդ նույն տարածքում»:[59] Քեմալը կտրուկ առարկում էր «արևելյան վիլայեթներից» հայերին թեկուզ մեկ թիզ հող տալու դեմ: «Նույնիսկ մինչև պատերազմը,— գրում էր նա,— այդ շրջանների բնակչությունը բաղկացած էր մեծ մասամբ թուրքերից, չնչին քանակությամբ այսպես կոչված զազա քրդերից և աննշան թվով հայերից»:[60]

Այսպիսով, դժվար չէ նկատել, որ քեմալականներն աշխատում էին Արևմտյան Հայաստանի քրդական առաջնորդներին համախմբել հակահայկական պլատֆորմի վրա:

Էրզրումի կոնգրեսում Մուստաֆա Քեմալի կողմից ղեկավարվող ներկայացուցչական կոմիտեի մեջ (9 մարդ) մտան երեք քրդեր. շեյխ Ֆեվզի–էֆենդին, Սաղուլլա–էֆենդին և Հաջի Մուսա բեյը: Քեմալականների հետ ակտիվ համագործակցության մեջ էր գտնվում նաև ազդեցիկ քրդական առաջնորդ Ջեմիլ Չատո–բեյը: Սակայն Մուստաֆա Քեմալը չեր վստահում ներկայացուցչական

կոմիտեի քուրդ անդամներին, նրանց համարելով ոչ մի «քաղաքական և ռազմական փորձ չունեցող պատահական մարդիկ», ուստի այդ կոմիտեն ոչ մի անգամ չհավաքվեց: Իր հերթին կոմիտեի քուրդ անդամները ևս, հատկապես Օմեր Ֆեվզի–բեյը, հավատ չէին ընծայում Քեմալի նկատմամբ:[61] Սակայն չնայած այդ բոլորին, Էրզրումի կոնգրեսից հետո Մուստաֆա Քեմալը, պայքարելով հույների դեմ ե խուսանավելով աուլթանի ու խալիֆաթի նկատմամբ, շարունակում էր հենվել քրդական առաջնորդների վրա: Այսպես, նրանցից մեկի՝ Շիրնաքցի Աբդուրրահման–աղայի անունով գրված ուղերձում նա նշում էր. «Ամբողջ աշխարհին է հայտնի Ձեր նվիրվածությունը խալիֆաթին ու սուլթանաթին: Ոչ պակաս ակներև է նաև, որ դուք երբեք չեք համաձայնվի այն բանի հետ, որ Ձեր հայրենիքի սուրբ հողը ոտնահարվի հայերի կողմից: Ձեզ եմ ուղարկում Էրզրումի կոնգրեսի կողմից ընդունված մանիֆեստի ու որոշումների որոշ քանակությամբ օրինակներ: Խնդրում եմ անհապաղ ձեռնամուխ լինել ազգային ուժերի կազմակերպմանը և եռանդուն կերպով վերջ տալ մեր հակառակորդների դավաճանական գործողություններին: Հավատալով Ձեր հայրենասիրությանը և նվիրվածությանը, մնում եմ սպասող Ձեր կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքներին»:[62]

1919թ. օգոստոսի 10–ին մութքի ցեղի առաջնորդ Հաջի Մուսա–բեյին ուղղված ուղերձում Մուստաֆա Քեմալը մասնավորապես նշում էր. «գովեստով ու երախտագիտությամբ մենք մշտապես հիշում ենք այն արժեքավոր օգնության մասին, որ Դուք բազմիցս ցուցաբերել էք բանակին մեր կողմից Բիթլիսը վերստին հետ վերցնելիս, ինչպես նաև Ձեր եռանդը Մութքի (Մոթկանի — Վ.Բ.) շրջանը թշնամուց պաշտպանելիս... Մեր թշնամիները այժմ ձգտում են մասնատել մեր երկիրը և ստրկացնել մեր ազգին, որը դարեր շարունակ այնքան արյուն է թափել հանուն իսլամի, գրկել նրան ինքնիշխան իրավունքներից ու անկախությունից: Նրանք ձգտում են այն բանին, որպեսզի մեր նախնիներից ժառանգած մեր մայր–հայրենիքի տարածքում ստեղծեն Հայաստան...»:[63] Նմանատիպ հեռագրեր ուղարկվեցին նաև շեյխ Աբդուլբակի–էֆենդի Քյուֆրեվի–Զադեին (Բիթլիսից), Օմեր–աղային (Դերշեվից), Ռեսուլ–աղային (Մուշասից), Աադուլլա–էֆենդիին, շեյխ Մահմուդ–էֆենդիին, շեյխ Զիա–էդ–դին–էֆենդիին (Նուրշինից), Ջեմիլ Չատո–բեյին (Գարզանցի քրդերի ցեղապետ): Քրդական

ղեկավարներից շատերը արձագանքեցին Մուստաֆա Քեմալի կոչին: Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից Անկարա ուղարկվեցին հեռագրեր ու նամակներ, որոնցում ասվում էր, որ իրենք հավատարիմ են խալիֆաթին ու սուլթանաթին, ինչպես նաև թուրք և քուրդ ժողովուրդների բարեկամությանը:[64]

Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանության ընկերության Սվասի կոնգրեսը տեղի ունեցավ 1919թ. սեպտեմբերի 4–12–ին: Այս կոնգրեսում տեղի ունեցավ թուրքական ազգային իշխանության հետագա համախմբում: Ընտրվեց նոր ներկայացուցչական կոմիտե Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ, որը փաստորեն իրենից ներկայացնում էր ժամանակավոր կառավարություն:

Քեմալականների կողմից Սվասի կոնգրեսում 1919թ, սեպտեմբերի 11–ին ընդունված մանիֆեստում ասվում էր. «Օսմանյան կայսրության տարածքը, որը բնակեցված է գերակշիռ մեծամասնությամբ մահմեդականներով և որը 1918թ. հոկտեմբերի 30–ին, այսինքն զինադադարի ակտի ստորագրման օրվանից, որը կնքվեց Օսմանյան կայսրության և Եռյակ Համաձայնության պետությունների միջև և մնաց մեր սահմանների շրջանակներում, կազմում է մի միասնական ամբողջություն, որի ոչ մի մասը չի կարող ոչ մի պատրվակով անջատվել Օսմանյան պետությունից» (Հոդված 1):[65]

Էրզրումի կոնգրեսի 2–րդ հոդվածում շեշտվում էր, որ Թուրքիայի տարածքի ամեն մի օկուպացումը, ինչպես նաև նրա ներքին գործերին ամեն մի միջամտությունը քեմալականները դիտում են որպես մի միտում, որն ուղղված է հունական և հայկական համայնքների ստեղծմանը և դրա դեմ առաջ են քաշում ինքնապաշտպանության և փոխադարձ աջակցության սկզբունքը:[66] Նմանատիպ հարցադրումներ առատորեն պարունակում էին նաև Սվասի կոնգրեսի մանիֆեստի մեջ: Ի դեպ, Սվասի կոնգրեսի գումարման օրերին Անկարայում քեմալականները լուրեր ստացան այն մասին, որ Մալաթիայի շրջանում քրդերը պատրաստվում են բարձրացնել ապստամբություն՝ «անկախ Քրդստան» ստեղծելու նպատակով: Այդ շարժումը երկաթյա ձեռքերով հենց սաղմում ոչնչացնելու նպատակով, որը Քեմալը համարում էր անգլիացիների սադրանքի արդյունքը, քեմալականները ձեռնարկեցին կտրուկ միջոցառումներ: 1919թ. սեպտեմբերի 10–ին Մուստաֆա Քեմալը

15–րդ գնդի հրամանատար Իլյաս–բեյին դիրեկտիվ իջեցրեց «ամենաարմատական ձևով» և «բոլոր անհրաժեշտ միջոցներով» ճնշել քրդական այդ շարժումը և «փաղդիշահի ու բանակի» դեմ բոլոր ապստամբներին, որոնք սպառնում են Թուրքիայի ազգային գոյությանը, անխնա կոտորել:[67]

Այնուամենայնիվ ցանկանալով պարզել ապստամբության դրդապատճառները, Մուստաֆա Քեմալը կարգադրում է Սվասի նահանգապետ Ռեշիդ–փաշային, որ նա իր մոտ բերել տա ապստամբությունը կազմակերպած քրդական առաջնորդներ Քյամուրան Ալի և Ջելյադեթ–բեյ Բաղդխաներին, Ջեմիլ–փաշազադե Էքրեմ–բեյին և մյուսներին: Սակայն նրանցից միայն քոչգիրի ցեղի առաջնորդ Ալիշան–բեյին հաջողվեց տանել Քեմալի մոտ: Ալիշան–բեյը հայտարարում է Մուստաֆա Քեմալին, որ ԱՄՆ–ի նախագահ Վիլսոնի սկզբունքների համաձայն, արևելյան նահանգները տրամադրվում են Հայաստանին և դրանով իսկ քրդերի շահերը հաշվի չեն առնվում: Ուստի և քրդերն ունեն մեկ նպատակ՝ քրդական մեծամասնություն կազմող վիլայեթներում (իմա՝ Արևմտյան Հայաստանում–Վ.Բ.) ստեղծել ինքնավար Քրդստան օսմանյան սուլթանաթի հովանավորության ներքո: Որպես պատասխան, Մուստաֆա Քեմալը հայտարարում է, որ Վիլսոնի սկզբունքները ոչ մի ուժ չունեն և քրդական առաջնորդներին առաջարկում է համագործակցել իր հետ, ավելացնելով, որ իբր Էրզրումի կոնգրեսում քրդական բոլոր ներկայացուցիչները իրեն հավաստիացրել են, որ կաջակցեն քեմալականներին:[68]

Պետք է նշել նաև, որ առանձին, աննշան դեպքերից բացի Արևմտյան Հայաստանում տեղի չունեցան քրդերի հակաքիմալական շարժումներ կամ լուրջ զինված ընդհարումներ:

Էրզրումի և Սվասի կոնգրեսների որոշումները դրվեցին 1920թ. նոյեմբերի 28–ին ընդունված «Ազգային ուխտի» (Misaki milli) հիմքում, որը բացառում էր Արևելյան Անատոլիայի, այսինքն Արևմտյան Հայաստանի, փաստական կամ իրավաբանական բաժանումն ու մասնատումը:[69] Էրզրումի և Սվասի կոնգրեսների որոշումները, ինչպես նաև «Ազգային ուխտի» ընդունումը նշանակում էին, որ քեմալականները բացառում են ոչ միայն Արևմտյան Հայաստանի տարածքում հայկական պետության, այլև քրդական պետության կամ ինքնավարության ստեղծումը: Սակայն միանգամայն ակներև էր նաև, որ թուրքական ու քրդա-

կան ազգային շարժումների դրդապատճառները շատ հարցերում, մասնավորապես հայկական հարցի՝ կապակցությամբ, կատարելապես համընկնում էին: Այդ դաշինքը կրեց ոչ թէ ժամանակավոր, այլ մշտական բնույթ: Հենց դրա պատճառով Արևմտյան Հայաստանում քեմալականների դեմ չստեղծվեց ներքին քրդական ճակատ: Ընդհակառակը, Արևմտյան Հայաստանի քուրդ բանկչության զգալի մասը ներգրավվեց Հայաստանի և Հունաստանի դեմ գինված պայքարի մեջ: Քրդերը ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև Կիլիկիայում ֆրանսիացիների և հայերի դեմ մղվող պայքարում: Այստեղ արձագանքելով քեմալականների հատուկ կոչին, քրդերը աչքի ընկան Ուրֆայի և Մարաշի շրջաններում, կազմակերպելով հայ բնակչության զանգվածային ջարդեր:

1919թ. դեկտեմբերի վերջին Մուստաֆա Քեմալը Էրզրումում կազմակերպեց մի շարք քրդական ու արաբական ցեղերի առաջնորդների հավաք: Օրակարգի հարցը Հայաստանի դեմ պայքարում ձեռնարկվելիք միջոցառումներն էին: Հատկանշական է, որ այդ հավաքին ներկա էին նաև մուսավաթական Ադրբեջանի ներկայացուցիչները: Մուստաֆա Քեմալը առաջարկեց ստեղծել «իսլամական ուժեր» («զուվվա–ի իսլամիյե»), որոնք կազմված էին լինելու քրդական և արաբական ցեղերից՝ իրենց ցեղային առաջնորդների հրամանատարության ներքո:[70]

1920թ. սկզբներին Կողբի, Կաղզվանի, Արարատի և Օլթիի քրդերը իրենցից ներկայացնում էին վտանգավոր ուժ Հայաստանի Հանրապետության համար: Նրանք կարող էին հայկական ուժերը ջլատել կամ թիկունքից վտանգել, եթե նա փորձեր մտնել Ալաշկերտ և Բասեն «զենքի ուժով տեր հանդիսանալու համար հայրենի հողին»: [71]

Այս մտահոգություններից դրդված, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, 1920թ. հունվարից սկսած, մեծ ուշադրություն դարձրեց Հայաստանի սահմանների մեջ ամփոփված քրդության վրա, նրանց եթե ոչ Հայաստանի բարեկամ դարձնելու, այլ գեթ լոյալությունը ապահովելու համար: Հայաստանի կառավարության որոշմամբ և ներքին գործոց նախարարության հրահանգով Կ.Սասունին, 1920թ. մարտից մինչև ապրիլի վերջը, շրջագայել է վերոհիշյալ շրջանները և Կարսի նահանգապետ Ղորղանյանի հետ միասին տեսակցություններ է ունեցել քուրդ և ադրբեջանցի ներկայացուցիչների հետ՝ միջցեղային համերաշ-

խության քարոզներով: Այդ նույն ժամանակ Կ.Սասունին առանձին տեսակցություններ է ունեցել քրդական ղեկավարների հետ, աշխատելով հասկացնել նրանց քուրդ–հայկական համագործակցության անհրաժեշտությունը: Սակայն բացի եզիդներից, մոտ 60 հազար քրդեր գրավել են վերապահ դիրք: Թեև խոսքով նրանք միշտ իրենց ցուցադրում էին որպես Հայաստանի քաղաքացի, բայց գործով «հակված էին թուրքին կողմը»:[72] «Քյուրտերը սպառազեն մնացին մեր սահմաններուն վրա,— շարունակում է Կ.Սասունին,— և հայ բանակը ստիպվեցավ մեկ աչքը պահել թրքական կանոնավոր զորքերուն ու թաթար ազգաբնակչության վրա, իսկ մյուս աչքով հսկել սահմանեն ներս և սահմանակից զինված քրտության վրա»:[73]

1920թ. սեպտեմբերին, հայ–թուրքական պատերազմը սկսվելուց հետո, Արևմտյան Հայաստանի քրդերի մի մասը միանալով Քյազիմ Կարաբեքիր փաշայի բանակին, կռվեց Հայաստանի Հանրապետության դեմ: Հատկապես իրենց հակահայկական գործելակերպի ակտիվությամբ աչքի ընկան Օլթիի և Կողբի քրդերը, ինչպես նաև Մալազկերտ–Արճեշի հայտարանցի աշիրեթը Քյոռ Հյուսեին փաշայի գլխավորությամբ: Սրանք մասնակցեցին նաև Կարսի և Ալեքսանդրոպոլի կռիվներին:

1920թ. օգոստոսի 10–ի ստորագրված Սևրի դաշնագիրը կոչված էր լուծում տալու անկախ Հայաստանի և Քրդստանի խնդիրներին:[74] Նրանում նախատեսվում էր ստեղծել ծավալուն սահմաններով Հայաստան: Ընդ որում, նրա արևմտյան և հարավային սահմանները գծելու համար իրավարար նշանակվեց ԱՄՆ–ի նախագահ Վուդրո Վիլսոնը: 1920թ. աշնանը նա տվեց Հայաստանի վերջնական սահմանագիծը: Սևրի պայմանագրով Քրդստանի հարցը ևս ստանում էր մասնակի լուծում: Դաշնագրի 62, 63 և 64–րդ հոդվածները վերաբերում էին այն քրդերին, որոնք բնակվում էին գլխավորապես Արևմտյան Հայաստանի տարածքում: Թվում էր, թե հայ–քրդական դարավոր կնճիռը վերջապես հասնում էր իր ավարտին, և հայերն ու քրդերը թևակոխում են համերաշխության ու համագործակցության լայն մայրուղին: Սակայն Սևրի պայմանագիրը գործնական իրականացում չստացավ և մնաց թղթի վրա: Այն ստորագրող պետությունները (բացառությամբ Իտալիայի) դաշնագիրը ռատիֆիկացման չենթարկեցին: Ընդորում հետագայում Անգլիան վերանայման ենթարկեց իր իսկ

առաջ քաշած պլանները անկախ Քրդական պետություն ստեղծելու վերաբերյալ: Այդ պայմանագրի ձախողումը հետևանք էր միջազգային դրության կտրուկ վատթարության, որն իր արձագանքներն ունեցավ նաև Մերձավոր Արևելքում: Սկզբնական հաջողություններից հետո, հույները բախվեցին քեմալականների աճող դիմադրությանը և սկսեցին կրել պարտություններ: Ամրապնդվեցին նաև քեմալականների արտաքին քաղաքական դիրքերը, գլխավորապես շնորհիվ Սովետական Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերությունների հաստատման: Զարգանում էին շփումները նաև Անտանտի անդամներ Ֆրանսիայի և Իտալիայի հետ, որոնք չէին թաքցնում իրենց դժգոհությունը Սևրից: Քեմալական բանակի մարտական հատկանիշները և ազգայնական ներշնչումներով տոգորված բարոյական ոգին վերելք էին ապրում:

Այսպիսով, Սևրի դաշնագիրը, որն ինքնին դիվանագիտական հաջողություն էր Հայաստանի համար, աստիճանաբար կորցրեց իր արժեքը: Թե՛ Անկարան և թե՛ Մոսկվան կտրականապես հրաժարվեցին ճանաչել այն, համարելով «իմպերիալիստական»: Անկասկած Սևրի դաշնագիրը ստորագրելուց հետո թուրքական վտանգը Հայաստանի համար ավելի մեծացավ, որովհետև Թուրքիան ցանկանում էր զենքի ուժով պատռել այդ դաշնագրի պայմանները: Քեմալականները ակնառու կերպով տեսնում էին, որ Եվրոպան հոգնել է և ձգտում է կարգավորել իր հարաբերությունները Թուրքիայի նոր իշխանությունների հետ, որի ղեկավարները, պետք է խոստովանել, որ ցուցադրեցին մեծ եռանդ և ընդունակություն:

1920թ. դեկտեմբերի 2–ին թուրք–հայկական պատերազմում պարտություն կրած Հայաստանը ստիպված էր ստորագրել Ալեքսանդրոպոլի պայմանագիրը: Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, փակելով առաջին հանրապետության պատմական տարեգրության վերջին էջը: 1918–1920թթ. հայ–քրդական հարաբերությունների պատմությունը անշուշտ սպասում է իր մանրակրկիտ ուսումնասիրողին, սակայն կասկածից վեր է, որ այն կարող է երկու ժողովուրդների համար էլ հանդիսանալ խիստ կարևոր և ուսանելի մի դաս:

VAHAN BAYBURDYAN

ARMENIAN–KURDISH RELATIONS IN THE TIMES OF THE FIRST ARMENIAN REPUBLIC

A great mass of the Kurdish nation took part in the Armenian genocide organized by the government of Young Turks during the First World War. This fact aroused hostility between Armenians and Kurds. Kurdish nationalists intended to form "Independent Kurdistan" on the territory of Western Armenia and therefore they made efforts to prevent the creation of an independent Armenian State, raised by some great states.

In spite of the consecutive steps taken by the first Armenian Republic to cooperate with Kurdish leaders and to solve the discord between two nations with admissible conditions, Kurdish nationalists, who served to the Turkish State System frustrated those attempts both during the rule of Sultan and Kemalists.

Once more, in 1919, during the Conference of Paris another attempt was made to form a united Armenian–Kurdish diplomatic front, which failed too.

The article analyses in detail the policy of Great Britain concerning the Armenian Question. It shows how the vicious policy of great states made the treatment of Sevr unable to solve the Armenian Question.

On the grounds of numerous documents is shown the way, how Kemalists and Turkish nationalists tried to raft the Kurdish leaders of Western Armenia on the anti–Armenian platform.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կ.Սասունի, Քյուրտ ազգային շարժումները և հայ–քրդական հարաբերությունները (ԺԵ դարեն մինչև մեր օրերը), Պեյրութ, 1969, էջ 228:
2. История дипломатии, т. III, М.,1965, с 44.
3. А.М.Шамсутдинов, Участие султанской Турции в интервенции против Советской России в 1918г. "Ученые записки института востоковедения", т. XIV. История и экономика стран Ближнего и Среднего Востока, М., 1956, с. 168.
4. Е.Ф.Лудшувейт. Турция в годы первой мировой войны 1914—1918гг. Военно—политический очерк. М., 1966, с. 161—162.
5. W.E.D. Allen, Paul Muratoff. Caucasian Battlefields. A History of the Wars on the Turco–Caucasian Border. 1828–1921, Cambridge, 1953, p. 459–460.
6. Կ.Սասունի, նշվ. աշխ., էջ 224–225:
7. Նույն տեղում, էջ 225:
8. Архив Внешней политики России (այսուհետև АВПР), ф. НАИ, серия А, д.153, л 38.
9. АВПР, ф. НАИ, серия А, Д. 36, л. 106—107; д. 37, л. 55.
10. Precis of Affairs in Southern Kurdistan during the Great War. Bagdhad, 1919, p. 7–8.
11. Նույն տեղում, էջ 8:

12. D.A.Schmidt. Journey among Brave Men. Boston–Toronto, 1964,p.192–193. E.Yung. La Revolte arabe, Vol. I, Paris, 1924–1925, s. 109–110.
13. Կ.Սասունի, նշվ. աշխ., էջ 229:
14. John Darwin. Britain, Egypt and the Middle East. Imperial policy in the Aftermath of War 1918–1922, N.Y., 1981, p. 162.
15. Կ.Սասունի, նույն տեղում, էջ 229:
16. Տես՝ Վ.Ա.Բայբուրդյան, Հայ–քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում (XIX դարում և XX դարի սկզբին), Երևան, 1989:
17. Կ.Սասունի, նշվ. աշխ., էջ 229:
18. Ազապի Նասիպեան, Բրիտանիա և հայկական հարցը 1915–1923, Պեյրութ, 1994, էջ 127:
19. Ю.В.Ключников и А.Б.Сабанин. Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч II, М.,1926, с.188–189.
20. Ph.W. Ireland.Iraq. A Study in Political development, London, 1937, p. 155.
21. Տե՛ս R.S.Stafford. The Tragedy of the Assyrians, London, 1935; J.Joseph. The Nestorians and their Muslem Neighbours, Princeton, 1961.
22. Precis of Affairs..., p. 10–11.
23. М.С.Лазарев. Империализм и курдский вопрос (1917–1923), М.,1989, с. 68.
24. G.Bell.Review of the Civil Administration of Mesopotamia, London, 1920, p. 66.
25. Նույն տեղում, էջ 69:
26. A.Nassibian. Britain and the Armenian Question, 1915–1923, London, 1984, p. 139–142.
27. АВПР, ф. НАИ, серия А, д.153, л. 20.
28. М.А.Гасратян. Курды в Турции в новейшее время. Ер.,1990, с. 9.
29. M.N.Dersimi.Kürdistan Tarihinde Dersim.Halep, 1952, s. 120–121.
30. ՀՀ Պետական Կենտրոնական Պատմական Արխիվ, ֆ. 2000, ց. 1, գ. 150, թ. 53–55:
31. Z.Silopi.Doza Kurdistan, 1969, s. 166.
32. Կ.Սասունի, նշվ. աշխ., էջ 234:
33. ՀՀ ՊԿՊԱ, ց. 1, գ. 150, թ. 216–219:
34. Տե՛ս General She'rif Pasha.Memorandum on the Claims of the Kurd People.Paris, 1919.
35. М.С.Лазарев. նշվ. աշխ., էջ 137:
36. G.Bell.Review..., p. 65–66.
37. АВПР, ф. НАИ, серия А, д.153, л. 2.
38. L.Rambout. Les Kurdes et le droit.Paris, 1947, s. 24. Տե՛ս նաև A History of the Pease Conferance of Paris. Vol.VI. London, 1924.
39. Կ.Սասունի, նշվ. աշխ., էջ 235:
40. A.Safrastian.Kurds and Kurdistan. London, 1948, p. 77.
41. Documents on British Foreign Policy.1919–1939. 1st Series, Vol. IV, N^0 621, p. 928 (Հետագայում DBFP).
42. Կ.Սասունի, նշվ. աշխ., էջ 235:
43. Նույն տեղում, էջ 236:
44. Նույն տեղում, էջ 236:

45. Նույն տեղում, էջ 228–229:
46. АВПР, ф. НАИ, серия А, д.153, л. 57
47. DBFP 1919–1939. First Series, Vol. IV, p. 704
48. Նույն տեղում, էջ 540–541, 704–705:
49. Նույն տեղում, էջ 735–736:
50. G.Bell.Review..., p. 66–67, 69–70.
51. Նույն տեղում, էջ 71: АВПР, ф. НАИ, серия А, д. 154, л. 34–35.
52. АВПР, ф. НАИ, серия А, д.154, л. 66.
53. М.С.Лазарев. նշվ. աշխ., էջ 107, 292:
54. АВПР, ф. НАИ, серия А, д.154, л. 63.
55. Мустафа Кемаль. Путь новой Турции, т I, М.,1929, с. 9.
56. Նույն տեղում, էջ 203–204, 208–209:
57. V.E.Askun.Sivas Kongresi,Istanbul, 1963, s. 73.
58. Мустафа Кемаль, նշվ. աշխ., էջ 381:
59. Նույն տեղում, էջ 99–100:
60. Նույն տեղում, էջ 101:
61. K.Atatürk.Nutuk,Cilt I, Istanbul, 1962, s. 68–69.
62. K.Atatürk.Nutuk, Cilt III, s. 940.
63. Мустафа Кемаль, նշվ. աշխ., էջ 231–238:
64. M.Gologlu.Uçüncü Mesrutyet. 1920. Ankara, 1970, s. 81.
65. V.E.Askun.Sivas Kongresi, s. 127.
66. Мустафа Кемаль, նշվ. աշխ., էջ 301:
67. Նույն տեղում, էջ 255–256:
68. M.N.Dersimi.Kürdistan Tarihinde Dersim.Halep, 1952, s. 122-129.
69. E.Z.Kazal. Türkiye Cumhuriyeti Tarihi (1918–1960), Istanbul, 1963, s. 52.
70. АВПР, ф. НАИ, серия А, д.190, л. 50.
71. Կ.Սասունի, նշվ. աշխ., էջ 230:
72. Նույն տեղում:
73. Նույն տեղում:
74. Տես "Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне", М.,1927.